ԵՍԱՅԻ ԱՍԱՏՐՅԱՆ



ԹԱՂԻՆԻ ԵՐԶԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

9(47.925)
Հ-32

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԵՍԱՅԻ ԱՍԱՏՐՅԱՆ

ԹԱԼԻՆԻ ԾՐՋԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

3392

«ՀՈՒՇԱՐՁԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2004

ՀԱՅԿ ՊԵՏ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԳՐԱԿԱՆ
БИБЛИОТЕКА
Դ-Ի ՌՈՍՏՈՎՅԱՆ, ԱՅ ԱՐՔ.

ՀՏԴ 941(749.25)+725.945
ԳՄԴ 63.3(2Հ)+85.11
Ա 732

ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ Է
ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ԱՍԱՏՐՅԱՆ ԵՍԱՅԻ
Ա 732 ԹԱԼԻՆԻ ՇՐՋԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ.-
Եր.: «ՀՈՒՇԱՐՁԱՆ», 2004

Հնագետ Եսայի Ասատրյանի «Թալինի շրջանի հուշարձանները» աշխատությունը բովանդակում է հարուստ տեղեկատվություն Արագածոտնի մարզի Թալինի ենթաշրջանի հնագիտական հուշարձանների ճարտարապետության և պատմության մասին: Հանրամատչելի լեզվով շարադրված է գիտատեղեկատվական ուղեցույցի հրատարակումը կնպաստի պատմամշակութային արժեքների պահպանությանը և զբոսաշրջության խթանմանը Արագածոտնի մարզում:

ԳՄԴ 63.3(2Հ)+85.11

Издательство "Ушардзан" (Памятник)
Ереван, 2004

Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն, 2004

Տպագրված է «Սոֆյան Պրինտ» տպարանում

© ԱՍԱՏՐՅԱՆ ԵՍԱՅԻ
© «ՀՈՒՇԱՐՁԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ISBN 99930-865-1-7

ՆԱԽԱԲԱՆ

Խորհրդային կարգերի օրոք ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և մշակույթի հուշարձանների գլխավոր վարչության պետ Ա. Կիրակոսյանի նախաձեռնությամբ մի գեղեցիկ մտահաղացում էր իրականացվում: Շրջան առ շրջան ներկայացվել էին պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները՝ պատկերազարդ գիտատեղեկատու հոդվածների ժողովածուների տեսքով: Դրանք նպատակ էին հետապնդում ընթերցողների լայն շրջանին ներկայացնել տարածաշրջանների առավել կարևոր պատմամշակութային արժեքները, նպաստել դրանց պահպանությանը, զարկ տալ զբոսաշրջության զարգացմանը:

Եսայի Ասատրյանի «Թալինի շրջանի հուշարձանները» գրքույկը վերաբերում է այդ շարքին: Այն հրատարակության էր պատրաստվել դեռևս 1988թ-ին և հանձնվել էր «Հուշարձան» հրատարակչությանը: Արցախի ազատագրական շարժումը, սակայն, իր սրբագրումը դրեց դեպքերի հաջորդական ընթացքի վրա: Եսայի Ասատրյանը, լինելով Սասնա դյուցազնական զարմի ժառանգորդ, անմիջապես հայտնվեց իրադարձությունների կիզակետում: Նախկին գիտնականը զինվորագրվեց բռնազավթված հայոց տոհմիկ հողերի ազատագրմանը, և Արցախի ազատագրված ամեն մի գյուղի մեջ նա թերևս մտովի տեսնում էր Սասնա աշխարհի «էրգրի» կորցրած ու վերագտած շեները:

Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի «Հուշարձան» հրատարակչության արխիվում խնամքով պահվում են շուրջ 60 անտիպ աշխատություններ: Դրանք ըստ կարևորության ներկայացվում են հրատարակության պետպատվերի շրջանակում: Դրանցից առաջինը տպագրում ենք Թալինի շրջանի հուշարձաններին նվիրված Եսայի Ասատրյանի գիրքը, որը, չնայած անցած ժամանակին, չի կորցրել իր արժեքը և կարևորությունը: Զբոսաշրջիկների համար այն կարևոր ուղեցույց կարող է ծառայել և նպաստել հուշարձանների պահպանության ազգանպաստ գործին:

Հ.Ե.ՍԻՄՈՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

Մ ՈՒ Տ Ք

Թալինի շրջանը պատմական Արագածոտն գավառի կարևոր վիճակներից է: Արևմուտքից սահմանակից է Շիրակին, արևելքից՝ Աշտարակի, հարավից՝ Բաղրամյանի շրջաններին: Թալինի տարածքը լեռնատափաստանային է՝ հարուստ քարացրոններով՝ զուրկ լճերից և մշտահոս գետերից: Շրջանի մեջ է մտնում Արագածի ալպյան արոտավայրերի մի մասը, որտեղ իր գոյությունն է սկսել պալեոլիթյան մարդը:

Մ.թ.ա. 3-1-ին հազարամյակներում ինչպես Արագածոտնը, այնպես էլ Թալինի շրջանը, պատվում է բազմաթիվ բնակավայրերով և կիկլոպյան ամրոցներով: Կառույցների առատությունը ինքնին վկայում է, որ Թալինի շրջանը եղել է Հայկական աշխարհի քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի ընդհանուր ոլորտում և իր որոշակի դերն է ունեցել այնտեղ: Այդ ժամանակների վկաներն են Բազմաբերդի, Իրինդի, Ծաղկասարի , Սասնաշենի, Գառնհովիտի կիկլոպյան ամրոցները, հարյուրավոր դամբարանադաշտեր, Դաշտադեմի յայլաների վիշապակոթողները: Թալինի մասին առաջին գրավոր տեղեկությունները ի հայտ են եկել Կարմիր բլուրում: Այստեղ հայտնաբերված կավե սալիկների սեպագրերը տեղեկացնում են, որ Արտիունա /Արտին/ լեռան մոտ ծիպայան երիտասարդները սպանել են արքունական երկու հետախույզ:

Արշակունիների օրոք Թալինը եղել է արքունի սեփականություն, ուր կառուցվել են մի շարք ձմեռանոց-զորակայաններ: Հավանաբար 4-րդ դարում նրա տարածքի մի մասը, իբրև սեփական կալվածք, արքունի հրամանով նվիրում է Կամսարական և Գնթունեաց նախարարական հարուստ տներին: Այդ տները, ինչպես նաև Հայաստանի մայրաքաղաքներին /հոգևոր կենտրոններին/ մոտ լինելու հանգամանքը նպաստեցին տվյալ շրջանում հայկական վաղ միջնադարյան ճարտարապետության եվ կիրառական արվեստի նշանավոր կոթողներ ստեղծելուն. Թալինի Մեծ ու Փոքր եկեղեցիները, Մաստարայի, Գառնհովտի, Իրինդի, Զարինջայի եկեղեցիները: Թալինի շրջանի քարակոփ կոթողները, լինելով հայկական վաղ միջնադարյան ճարտարապետական արվեստի յուրահատուկ նմուշներ, աչքի են

ընկնում բարձրարվեստ սյուժեների բազմազանությամբ և կատարողական հմտությամբ:

Արաբական արշավանքների ընթացքում Թալինի շրջանը, մի քանի անգամ ավերվածությունների ենթարկվելով, անկում է ապրում:

Հայոց պետականության վերականգնումով Թալինի տարածքը անցնում է Բագրատունիներին: Այդ ժամանակահատվածում շրջանը նորից վերելք է ապրում, հատկապես Թալին ավանը, որը հիշատակվում է որպես գյուղաքաղաք: X-XIII դարերից, հռչակավոր Անիի ծաղկման ժամանակներից մեզ են հասել մի շարք վիմագիր արձանագրություններ, որոնք վերաբերվում են Թալինի գյուղերում եղած հասութաբեր ձեռնարկությունների, հողերի նվիրատվությանը կամ վաճառքին: Շրջանի տարածքով անցել է առևտրական ճանապարհի մի ճյուղը՝ տարանցիկ առևտրի ուղին: Թալինում դրա սպասարկման համար կառուցվել է մեծ քարավանատուն:

Մոնղոլ-թաթարական արշավանքների, ապա՝ XVI-XVII դարերում թուրք-պարսկական պատերազմների ընթացքում դառնալով ռազմաբեմ, Թալինի շրջանը ամայանում է: Բնակությունն այստեղ վերահաստատվում է 1828 թվականից հետո, Արևմտյան Հայաստանից գաղթածներով, իսկ հետագայում՝ 1920 թվականին, բնակչությունը կրկնապատկվում է սասունցիների և մշեցիների գաղթով: XIX դարի երկրորդ կեսից Թալինում և նրա շրջակա գյուղերում հաստատված բնակիչները կառուցում են մի շարք բազիլիկ եկեղեցիներ, քաղաքային տիպի բնակելիներ, որոնք հետաքրքրական են հայ ճարտարապետության պատմության համար:

Թ Ա Լ Ի Ն

հազարամյակների պատմություն ունեցող Թալին ավանը գտնվում է Արագածի հարավարևմտյան լանջի նույնանուն սարահարթի վրա: Թալինի բնակեցման մասին հետաքրքիր տեղեկություն է հաղորդում Թովմա Արծրունին: Թեև այդ տեղեկությունը զերծ չէ առասպելաբանությունից, սակայն ունի իրական հիմք և, հավանաբար, վերաբերում է մեր թվարկության առաջին դարին: Ըստ պատմիչի, Առջամ թագավորը տիրելով Հայաստանին, Բագրատունյաց տոհմը գցում է բազում տանջանքների մեջ, և ահա ***«Ջաջուռ Արծրունին վերցրեց նրան ահ ու երկյուղով և լիովին կազմ ու պատրաստ բերեց բնակեցրեց Արագածի կողմերը Թալին անունով գյուղում: Սա առաջինն էր Բագրատունիների կողմից, որը եկավ և բնակվեց Արարատ նահանգի այս կողմերում»***: Հունական աղբյուրներում հիշատակվում է նաև Թալինա անունով գյուղը:

Մոտավորապես IV դարում Կամսարական նախարարները Արշակունի արքաներից ստանում են Թալինը, որպես նվիրատվություն և այն դարձնում իրենց նստոցը: Այս մասին հաջորդ տեղեկությունը մեզ հաղորդում է Անանիա Շիրակացին իր կազմած թվաբանական 20-րդ խնդրի մեջ: Սա վերաբերում է Ներսես Կամսարականի և նրա ազատների Արտին լեռան շրջակայքում կազմակերպած որսի արդյունքներին: Որսին մասնակցած ազատներին Կամսարականը կանչել էր Թալին գյուղից:

Արաբական արշավանքները տակնուվրա արեցին հայոց բարեբեր երկիրը, նրա ծաղկող քաղաքները և գյուղերը, որոնց թվում էր և Թալինը: Ղևոնդ պատմիչի վկայությամբ արաբները, Դվին քաղաքից դուրս գալով, հրի ու սրի են մատնել Պտղունքը, Թալին և Կողբ գյուղերը: Այդ ամենը կատարվել է 774 թվականին: Բագրատունյաց թագավորության հաստատվելուն զուգընթաց նորից սկսում են բարգավաճել Հայաստանի ավերված բնակավայրերը: VIII-X դարերում Թալինը, ըստ պատմիչների, եղել է նոր զարգացող, բարգավաճ ու վաճառաշահ ավաններից մեկը և հաճախ հորջորջվել է որպես գյուղաքաղաք: Այս զարգացումն ընդհատվում է սելջուկների արշավանքներով: Թալինի համար ճակատագրական է լինում սելջուկյան էլտկուզ ամիրայի

հանկարծահաս հարձակումը 1162 թվականին: Թալինը մատնվում է հրի, բնակիչների մեծ մասին կոտորում են, իսկ մնացածին՝ գերեվարում: Բագրատունիների անկումից հետո Թալինը անցնում է անեցի իշխաններին, և նորից սկսվում է Թալինի զարգացումը: Անի տանող ճանապարհի վրա կառուցվում է քարավանատուն:

Ջաքարյաններից հետո Թալինն անցնում է անեցի մեծահարուստներ Վախրուդինի և Քարիմանդինի ձեռքը՝ դառնալով մասնավոր տիրույթ: Այդ ժամանակաշրջանի Թալինը հաճախակի հիշատակվում է վիմագիր արձանագրություններում, կապված զանազան նվիրատվությունների, առևտրական գործարքների հետ: Անիի կործանումից հետո Թալինը դառնում է մի սովորական գյուղ: Հայաստանին տիրելու համար թուրք-պարսկական երկարատև պատերազմների ընթացքում շրջանը, ենթարկվելով ավերվածությունների և կողոպուտի, ամբողջությամբ դատարկվում է:

1639 թվականի դաշնագրով Թալինը մտնում է պարսկական խանության կազմի մեջ: Այդ ժամանակ Թալին գյուղում հաստատվում են նոր բնակիչներ, որոնց բնակելի տները կառուցվել են VII դարի եկեղեցիների շուրջը: Այդ առթիվ Թալինի Փոքր եկեղեցու ներսում քարի վրա մանր տառերով փորագրված է մի արձանագրություն.

«Աբրահամի որդիներ Ալեմշը և Գրիգորը Թալին են եկել 1687 թվականին»:

Հետագայում Թալինը նորից լքվում է և ապա կրկին վերածնվում 1828 թվականին, ռուս-պարսկական պատերազմից հետո: Թալինում մշտական բնակության համար հաստատվում են Ալաշկերտից, Կարսից եկած հայերը: Ներկայումս ավանում և նրա շրջակայքում կան բազմաթիվ հուշարձանների ավերակներ, որոնք անցած հազարամյակների վկաներն են:

ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻՆ Ավանի հյուսիսային եզրի տափարակի վրա իր պատկառելի պատկերով վեր է խոյանում հայկական ճարտարապետության անկրկնելի գոհարներից մեկը՝ Թալինի Կաթողիկեն /նկ. 1/:

Եկեղեցու կառուցման մասին շինարարական և մատենագիտական տեղեկություններ չկան: Սակայն, ըստ նրա հատակագծային կերպարի, վերծիգ ծավալների, արտաքին

Նկ.1 Թալինի Կաթողիկե եկեղեցին

հարդարանքի տարրերի, այն վերագրվում է VII դարին: Կաթողիկեի պատերի վրա եղած մի քանի արձանագրություններից վաղագույնը թվագրվում է 784 թվականով և վերաբերում է Ուխտատուր վանականի միջոցներով Թալին ջուր բերելու խնդրին: VII դարում Թալինում դեռևս իշխում էին Կամսարական նախարարները, որոնք հայտնի են իրենց շինարարական ծավալուն աշխատանքներով, ուստի, ամենայն հավանականությամբ, նրանք էլ կառուցել են Կաթողիկեն: Այն կանգուն է մնացել մինչը 1840 թվականի աղետաբեր երկրաշարժը: Երկրորդ անգամ ավերվել է 1926 թվականի երկրաշարժի ժամանակ: Հուշարձանների պահպանության կոմիտեն այն մասնակիորեն վերականգնել է 1947 և 1970 թվականներին:

Կաթողիկեն պատկանում է գմբեթավոր բազիլիկ տիպի եկեղեցիների դասին /տախտ. 1-ին, գծ. 4/: Հայաստանում սրա նման խոշոր կառույցներից են նաև Դվինի և Արուճի տաճարները: Եկեղեցու չափերն են՝ 36,7 x 26,7 մետր: Կաթողիկեի եռաստիճան հիմնախարիսխը դրված է քարից ու կրից կառուցված հատուկ հարթակի վրա: Թմբուկը 12 նիստանի է և ունի ատամնաշար քիվապսակ: Եկեղեցին ունեցել է 5 մուտք, որոնցից չորսը ունեն կիսաշրջան մեծ ճակա-

տակալներ, իսկ արևմտյան գլխավոր շքամուտքը՝ սյունազարդ մի պորտիկ: Եկեղեցու ներսում կա երկու ավանդատուն: Հյուսիսային ավանդատան թաղակապ ծածկի տակ երևում է պատերի մեջ եղած գաղտնարանների մուտքը: Գաղտնարանները ունեցել են նաև հակասեյսմիկ նշանակություն: Կաթողիկեին յուրատեսակ գեղեցկություն է հաղորդում արտաքին հարդարանքը, որը կազմված է խորանների արտաքին պատերի վրայի դեկորատիվ որմնասյուների և դրանց պայտաձև կամարների համադրությունից: Հարավային կողմում որմնասյուները վերևում ավարտված են զամբյուղաձև, փոքր խոյակներով, որոնք զարդարված են ականթի տերևներով: Խոյակներին իջնում են երեք լուսամուտների կամարները, որոնց մակերեսին իրապատկերով քանդակված են ողկույզներով ծանրաբեռնված խաղողի գալարահյուս որթեր և տերևներ: Կամարների վերևում քանդակված է արևի մի ժամացույց: Նույն կողմի մուտքի երկու կողմերի լուսամուտների կամարները պատված են շրջանակավոր վարդակներով և ականթի տերևներով: Արևմտյան պատի մեջ թողնված են խորշեր, որոնց մեջ դրվել են խոյակով ավարտվող որմնասյուներ: Դրանք, հավանաբար, կրելիս են եղել թևավոր խաչեր կամ արձաններ, որոնք չեն պահպանվել: Թմբուկի տակի կլոր լուսամուտները զարդարված են սլաքաձև շղթաներով: Եկեղեցու հյուսիսակողմի աբսիդների կամարաշարերը կրում են նռան ճյուղերի և պտուղների քանդակներ: Կամարներից մեկի ներքևի անկյունում դրվագված է նուռ հափշտակող մի արջ: Լուսամուտների կամարները նախշված են պայտաձև վզնոցաքանդակներով, բրգաձև զարդերով և ականթի տերևներով: Արևելյան կողմում ուղղանկյունաձև խորանի որմնասյուների խոյակները լցոնված են ոճավորված խոյաքանդակներով, իսկ կամարները՝ պարանահյուս պատկերներով: Ներսից եկեղեցու ավագ խորանի պատերին պահպանվել են երբեմնի հարուստ որմնանկարների որոշ հետքեր: Պատերը հարդարված են վզնոցապատկերներով,Տրդատ թագավորի հանդիսավոր երթի նկարով, կանգնած սրբերի և բուսական զարդերի նմանակումներով, որոնք վաղ քրիստոնեական արվեստում առկա զարդանկարային մոտիվներից են: Հետաքրքիր լուծում ունի նաև կաթողիկեի հատակի ձևավորումը: Կենտրոնական մասում այն կազմ-

ված է տարբեր մեծության շրջաններից, որոնք կատարված են մանր քարերի շարքերով: Կաթողիկեի չափերը, զարդաքանդակների և տաբեր տիպի լուսամուտներից թափանցող լույսի առատությունը նրան հաղորդում են մեծ վեհություն, և, երբ այն ակամա համեմատում ենք Զվարթնոցի տաճարի հետ, մեր աչքի առաջ վեր է հառնում այդ դարաշրջանի ստեղծագործ մտքի հզորությունը, որի շնորհիվ սերտորեն իրար միահյուսվել են կրոնական ասկետիզմը և աշխարհիկ կյանքի գույները:

ԲԱԶԻԼԻԿ ԵԿԵՂԵՑԻՆ. - Կաթողիկեից 7-8 մետր հյուսիս բացվել են բազիլիկ եկեղեցու հիմնապատերը: Այն միանավ, փոքր չափերի եկեղեցի է՝ կառուցված վարդագույն տուֆից: Պահպանված են որմնասյուների խարիսխներից երկուսը, որոնք ամբողջությամբ պատված են գծագոտիներով:

ՍՐԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ.- Կանգնած է Կաթողիկեից հարավ-արևելք մոտ 200 մետրի վրա /նկ. 2/:

Եկեղեցին պահպանված է ամբողջությամբ: Արևմտյան ճակատի արձանագրությունը հավաստում է, որ սրբ. Աստ-

Նկ. 2
Թալինի Ս. Աստվածածին եկեղեցին

վածածին եկեղեցին կամ Փոքր եկեղեցին կառուցել է պատրիկ Ներսես Կամսարականը, 681 թվականին: Այն խաչաձև, կենտրոնագմբեթ փոքր մի կառույց է /տախտ.1,գծ.1/:

Թալինի այս փոքր եկեղեցուն նմանատիպ են Լմբատավանքի, Աշտարակի, Ալմանի և խաչաձև հատակագծով այլ հուշարձաններ, որոնք վաղ միջնադարյան հայկական ճարտարապետության ինքնատիպ դրսևորումներից են: Եկեղեցին նստած է երկաստիճան հիմնախարիսխի վրա, որը հարավարևելյան կողմում դառնում է եռաստիճան: Այն կառուցված է կարմիր և սև տուֆի խոշոր սրբատաշ քարերով: Աստվածածինը ունի երկու մուտք, որից արևմտյանը կիսասյուներով հարդարված գեղեցիկ մի շքամուտք է և զարդարված է ոճավորված բուսազարդերով: Հյուսիսային խաչաթևում արտաքինից ունի խորան, որի պատին փորագրված է Օտարալեզու մի արձանագրություն: Լուսամուտների քիվերը զարդարված են վզնոցապատկերներով: Եկեղեցուն յուրահատուկ գեղեցկություն են հաղորդում ատամնավոր քիվապսակները: Այս զարդաձևերը խիստ բնորոշ են վաղ միջնադարին: Պատերի առանձին քարերի վրա կան քարգործ վարպետների թողած սվաստիկաձև խաչերով և հայերեն *ի* տառի նմանությամբ նշաններ: Եկեղեցու ներսը հետագայում պատվել է սվաղով, որի հետքերը պահպանվել են: Ներսի նորոգման ժամանակ բացվել են երկու արձանագիր տապանաքարեր:

Տապանաքարերից մեկը պատկանում է Սահակին՝ Դանիել Կարբեցու որդուն: Տապանաքարերը թվագրվում են IX դարի վերջով: Եկեղեցին մասամբ վերանորոգվել է 1947 թվականին: 1981 թվականին եկեղեցու շուրջը կատարվեցին պեղումներ, նրա ամբողջական վերականգնման նպատակով: Այդ աշխատանքների ընթացքում բացվեցին հուշարձանին հարակից կացարանների մնացորդներ, որոնք թվագրվում են XVI-XVII դարերով: Ապա եկեղեցուց արևմուտք տարածքի վրա պեղվեցին քաղաքացիական նշանակության մի մեծ շինության ավերակները: Սա բաղկացած է մի քանի բաժանմունքից, պատերը շարված են կոպտատաշ մանր տուֆ քարերով և կրաշաղախով: Շինության պեղումների ընթացքում գտնված ջնարական թասերը, բյուզանդական դրամները, քանդակազարդ քարերի բեկորները թվագրվում են XI-XII դարերով:

ՊԱՐԻՍՊՆԵՐ.- Հայ ճարտարապետության երախտավոր Թ. Թորամանյանը Փոքր եկեղեցուց արևելք ընկած ավերակները դիտել է որպես Կամսարական նախարարների ապարանք: Սակայն Երևանի պետական համալսարանի հնագիտական արշավախումբը ճշտեց դրանց ինչ լինելը: Պեղումներից պարզվեց, որ դրանք իրարից հավասար հեռավորությամբ դրված երկշարք վեց հատ քառակուսի պարագծով հզոր մույթեր են, կառուցված փոքր չափերի տուֆաքարերից՝ կրաշաղախի հզոր լիցքով: Առաջին երկու մույթերին կից դրված են սև տուֆից կառուցված, ուղղանկյուն խարսխով և կլոր կիսասյուներով մեծ որմնամույթեր, որ բերված են շատ հնագույն այլ շինություններից /նկ. 3/: Արևելյան

Նկ.3 Պարիսպների ավերակները

մասում պեղվեցին Թալինի քաղաքային պարիսպների հիմնապատերը՝ եզրային երկու մույթերին կից կառուցված հյուսիս-հարավ առանցքով: Պարիսպը այստեղ ունեցել է երկու մետր լայնությամբ մի մուտք: Վերոհիշյալ 6 մույթերը ծառայել են իբրև բնակավայրը շրջափակող պարիսպների գլխավոր դարպասներ: Այսպիսով, ուղևորները մուտք գործելով դարպասից ներս՝ դեպի եկեղեցական և պալատա-

կան համալիրները, անցել են ծածկված և հանդիսավոր շքամուտքով:

ՍՐԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ /XIX դ./.- Թալին ավանի կենտրոնում է: Կառուցվել է 1866 թվականին: Եռանավ բազիլիկատիպ եկեղեցի է, ունի փայտե թաղածև տանիք, որը հենվում է քարե սյուների վրա /նկ. 4/:

Եկեղեցու երկու մուտքերից արևմտյանը երկհարկ զանգակատան շքամուտքն է: Վերջինիս սյուները, խոյակները և ճարտարապետական այլ մանրամասներ վերցված են հնագույն մոնումենտալ ուրիշ կառույցներից: Ներսի, արևմտյան պատի որմնահեց աստիճանները տարել են կտուր: Եկեղեցու արևելյան խորանի առջևի և եզրային պատերին պահպանվել են որմնանկարների հետքեր: Ընդհանուր առմամբ, որմերին օգտագործված են ճարտարապետական և կիրառական արվեստի շատ հին ժամանակների մանրամասներ: Արևմտյան մուտքից աջ ու ձախ ագուցված են սև և կարմիր տուֆից երկու խաչքար: Ձախակողմյան խաչքարը հարդարված է պտղաբերությանն առընչվող բուսական զարդաքանդակով: Խաչքարի մակերեսին տեղ-տեղ նկատվում է կրաշաղախե միջուկը, որը ներկված է որդան կարմիրով. այն դեռ չի խամրել /նկ. 5/:

Արտաքին պատերին կան նաև XII-XIII և XIX դարերի խաչեր՝ բուսական, խաղողի ու նռան զարդերով, և միջնադարյան արձանագրությունների հատվածներ:

Նկ.4 Թալինի Ս. Աստվածածին եկեղեցու / XIX դ./ ընդհանուր տեսքը

Նկ.5 Խաչքար Թալինից

Հաջորդ, կարմրավուն տուֆե IX դարով թվագրվող խաչքարը դրված է խորանում: Նրա մեջտեղում պատկերված է հավասարաթև խաչ՝ ներքևի թևում օձագալար քանդակներով: Խաչքարի վերևի մասում նկատվում է մաշված արձանագրության մի հատված. «Ես Յով»: Եկեղեցու ներսի աստիճանների տակ թաղված է կլոր, մեծ մի սյան բեկոր՝ վրան դրոշմված V-VI դդ. հավասարաթև խաչ: Երկու կոթող օգտագործված են որպես հարավային մուտքի կողասյուներ: Հարավային պատին, քիվի տակ դրված է վառ կարմիր տուֆից կերտված կոթողի պատվանդանը՝ վրան Մարիամ Աստվածածինը Քրիստոսին գրկած: Սրբապատկերների կողքերին նստած են թևատարած հրեշտակներ; Բեմի կենտրոնում գտնվող կոթողի պատվանդանին պատկերված խաչի թևերը չորս կողմի վրա տարածվում են թրածև կայծակների տեսքով: Այս պատկերաքանդակը ևս շատ հազվագյուտ երևույթ է:

Եկեղեցու հարավային կողմում պահպանվում է քահանայի երկհարկանի տունը, ուր իջևանել են Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկն ու անգլիացի ճանապարհորդ Լինչը:

ՔԱՐԱՎԱՆԱՏՈՒՆԸ.- Թալինից Դաշտադեմ տանող ճանապարհի ձախ կողմում, գրեթե նրա եզրին եղել է Հայաստանի ամենամեծ քարավանատունը / 73,2 x 37,0 մ./, որից մնացել են ավերակներ: Այն գտնվել է «մետաքսի» նշանավոր տարանցիկ ճանապարհի վրա և եղել է նրա կայաններից մեկը, Անիից մեկ օրվա հեռավորության վրա: Այն մեկ

Նկ.6 Թալինի քարավանատան ավերակները



հարկանի, ներքին բակով և եզրային բուրգերով մի շինություն է, կառուցված սև տուֆից, ճակատների վրա սրբատաշ: Պահպանված են պատերը կրող կրաշաղախե միջուկի զանգվածները: Երեսպատման քարերի ճնշող մեծամասնությունը հանված է /նկ. 6/:

ԱՄՐՈՑԸ .- Թալինի վրա իշխող բարձր բլրի գագաթին մի քանի հեկտար տարածության վրա կան ավերակներ, որոնք երբեմնի ամրոցի մնացորդներն են: Տեղանքը կոչվում է «Զուլիակ բլուր»: Գետնին նկատվում են ամբողջ բլուրը շրջափակող, քառակուսի որմնահեցերով և կանոնավոր քարե շարվածքով պարիսպներ, որոնք ամրոցինն են: Բլրի ամենաբարձր մասը մի այլ պարիսպով առանձնացված է ամրոցի ընդհանուր հարվածից՝ որպես միջնաբերդ: Պարիսպներով ամփոփված տարածքում նկատվում են ուղղանկյուն հատակագծով մեծ շինությունների հետքեր, որոնց մեծ մասը ավերված է տարիներ առաջ փորված խրամուղիներով: Բլրի ստորոտին ևս նշմարվում են պարիսպների, ինչպես նաև բնակելի շինությունների հետքեր: Վերգետնյա հետազոտությունները ցույց են տալիս, որ ամրոցը ունեցել է եռաշարք պարիսպներ և գոյատևել է մ.թ.ա. 1-ին հազարամյակից մինչև վաղ միջնադար:

ՋՐԱՄԲԱՐԸ.- Եկեղեցիներից 1 կմ հյուսիս, Մաստարա տանող ճանապարհի ծախակողմյան եզրին են գտնվում միջնադարում կառուցված ջրամբարի ավերակները /նկ. 7/:

Քանի որ Արագածոտնը եղել է սակավաջուր շրջան, ոռոգման նպատակով դեռևս հնագույն ժամանակներում Արագած լեռան վրա կառուցվել են բազմաթիվ արհեստական ջրամբարներ, որոնցից շատերի հետքերը պահպանվել են ցայսօր:

Թալինի ընդարձակ, բնական գոգավորությամբ ձորակի բերանը փակվել է մոտ 80 մետր երկարության մի պատվարով: Այն ունի բազալտե քարերով շարված ամուր հիմքեր, որի վրա շարված են տուֆե մեծ բլոկներով, 6 մետր լայնություն ունեցող պատեր: Պատերի միջին շերտը կրաշաղախի և խամ քարի ամուր լիցքից է: Ջրի հսկայական ճնշմանը դիմակայելու հաշվով, պատվարը միջին մասում ունի դեպի ներս մի կորություն, որը վկայում է մեր նախնիների ստեղծագործ մտքի բարձր մակարդակի մասին: Ջրամբարը, հավանաբար,կառուցել են Կամսարականները՝ ոռոգման նպատակով, սակայն այն միաժամանակ ծառայել է նաև որպես եկեղեցիները և ավանը հեղեղներից պաշտպանող համակարգ:

ԿՈԹՈՂՆԵՐ.- Թալինի եկեղեցիների շրջակայքը աչքի է ընկնում նաև IV-VII դարերի կոթողների առատությամբ, որոնք առանձնանում են ոչ միայն քրիստոնեության հետ կապված պատկերաքանդակների բազմազանությամբ, այլև ազգային հնագույն հարատևող ավանդույթների հաս-

Նկ. 7 Թալինի ջրամբարի ավերակները

3392
БИБЛИОТЕКА

Նկ. 8 Թալին.
Քառակող կոթողի հատված



Նկ. 9
Հեթանոսական ծագումով կոթող

տատումով: Այս կոթողներից մի քանիսը բերված են Հայաստանի պատմության պետական թանգարան, իսկ մնացածները հավաքված են Թալինի Փոքր եկեղեցու մերձակայքում: Քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելուց հետո Հայաստանում /IV-VII դդ./ լայնորեն տարածվեցին քառակող կոթողային հուշարձանները: Դրանք, ըստ Ագաթանգեղոսի, դրվում էին քաղաքների, գյուղերի, ավանների հրապարակներում, ճանապահներին, հեթանոսական պաշտամունքի նախկին տեղերում և նպատակ ունեին լայնորեն ներկայացնելու նոր կրոնը: Միաժամանակ, դրանցից շատերը ծառայել են որպես մահարձաններ: Ըստ պատմածի, կոթողների վրա քանդակվել են Աստվածաշնչից քաղված հրաշագործման տեսարաններ, Ավետարանից՝ դրվագներ և սրբերի պատկերներ, խաչեր:

Այս շարքում առանձին տեղ ունեն հրաշագործման տեսարանները բուն հայկական թեմայով, որոնք հիմնականում կապված են Գրիգոր Լուսավորիչի գործունեության, ինչպես նաև հեթանոսական շրջաններից եկող, բայց նորովի կիրառվող զարդամոտիվների հետ:

Սև և կարմիր տուֆից , միմյանց նման երկու սյունատիպ քառակող կոթողներ կան Փոքր եկեղեցու մոտ: Մեկի քանդակների վերևի շարքում պատկերված է Գրիգոր Լուսավորիչը՝ նահատակի զգեստով, իսկ ներքևի շարքում՝ խոզագլուխ Տրդատը՝ արքայական ծիրանիով և արդուզարդով: Նա լիզում է Լուսավորիչի ներբանը՝ աղերսելով փրկություն: Երկրորդի վրա ևս պատկերված է արքայական ծիրանիով խոզագլուխ

Տրդատը, որը համբուրում է ձեռքին բռնած խաչակիր մեծ գավազանը: Երկու կոթողների մյուս երեսներին դրվագրված են հռիփսիմյան կույսեր, եռատերև ոճավորված թռչնակերպ բուսազարդեր և պատվանդանով խաչանշաններ: Հաջորդ քառակող կոթողի վրա քանդակված են ականթի տերևներ, որոնց վրա կանգնած սրբերը կարծես սավառնում են անհունության մեջ: Սրբերից մեկը կրծքի մոտ պահել է բացված գիրք, հավանաբար՝ Աստվածաշունչ: Մյուս սուրբը հենված է ձեռքի գավազանին: Դրանց հակառակ երեսին ներկայացված է վեղարով կամ սաղավարտով դեմքը ծածկած մի զինվոր՝ ձեռքին կեռ թուր: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում կարմիր տուֆից մի քառակող կոթող, որի ներքևի մասում քանդակված է առէջի վրա բարձրացող մի սյուն, որը վերջանում է ականթի տերևներով /նկ. 8/: Այս թեման հավանաբար գալիս է պտղաբերության գաղափարից և ունի հեթանոսական ծագում /նկ.9/: Կան նաև կոթողների հիմք ծառայող խորանարդաձև պատվանդաններ: Ընդհանրապես դրանց վրա պատկերված են թևերին գնդեր ունեցող հավասարաթև խաչեր, որոնց ստորին մասերը զարդարված են ականթի տերևներով: Սև տուֆե պատվանդաններից մեկի վրա պատկերված է բազմոցին նստած Մարիամ Աստվածածինը՝ մանուկ Քրիստոսը գրկին: Մարիամի շորերի քղանցքները իջնում են մինչև գետին: Նրա վարսերը երկայուս են: Աստվածամոր կողքին կանգնած են երկու գանգրահեր հրեշտակ, որոնք իրենց թևերով հովանավորում են նրանց /նկ. 10/:

Նկ. 10
Կոթողի պանտվանդան



Նկ. 11 Հատված Թալինի
մեծ դամբարանադաշտի պեղումներից

Պատվանդանի մյուս նիստերին պատկերված են գալարահյուս պարանազարդեր և իրար ագուցված ուղղանկյուն մարմիններ: Մարիամի քանդակապատկերով մեկ այլ կոթողի վրա, նրա գլխավերևում կանգնած է լուսապսակով մի սուրբ, որը ձեռքին պահել է գունդ: Հեղինակը այս տեսարանում հավանաբար պատկերել է երկնքում հայր աստծուն: Քանդակներում սովորական մարդու պատկերումը երկրորդական է, ըստ նոր կրոնի պահանջների: Առաջին պլան է մղվում սրբերի և նրանց հարաշագործությունների պատկերումը, հաճախ նաև քրիստոնեական երանգավորումով իմաստավորված՝ թեև բուսական ու կենդանական հնագույն ծագում ունեցող խորհրդանիշների առկայությամբ:

ԽԱՉՔԱՐԵՐ.- Թալինից 1,5 կմ հարավ-արևմուտք, խնձորի այգիների հարևանությամբ, կույս Սանդուխտ ուխտատեղիում հավաքված են մի քանի հնագույն խաչքարեր, որոնք իրավամբ կարող են մտնել հայկական խաչքարերի ոսկե ֆոնդը:

Նրանցից մեկը բազալտից է: Այն մոտ 2 մետր տրամագծով շրջանաձև քար է, առանց պատվանդանի, որի ամբողջ մակերեսին արված է հավասարաթև խաչի բարձրաքանդակ: Խաչի թևերի ծայրերը կլորացված են, զարդարված պարանահյուս զարդերով և 3 գնդերով: Խաչածայրերի գնդերը փոս են, կենտրոնինը՝ ուռուցիկ: Խաչաթևերի արանքում ոճավորված կենաց ծառեր են: Խաչի հիմքը և կենաց ծառերը սկզբնավորված են բույսի վարսանդից: Քանդակապատկերը բեղմնավորման, պտղաբերության ոճավորված մի եզակի դրվագ է: Մասնագիտական գրականության մեջ այս խաչքարը թվագրվում է VIII-IX դարերով: Մյուս երկու խաչքարերը թերևս առանձնահատուկ են և իրավունք են տալիս հիմնավորելու այն թեզը, որ խաչքարերի ծագումը կապվում է վիշապակոթողների հետ: Խաչքարերը կարմիր տուֆից են: Կոթողները վերևում լայն են և դեպի ներքև աստիճանաբար նեղանում են: Խաչքարերից մեկի ստորին մասը ջարդված է, մյուսն ունի 220 սմ բարձրություն: Խաչքարերի գլխամասում փորված են 15 սմ միջանցիկ կլոր անցքեր, որոնք բացվում են դրանց ճակատային մասում: Առաջինի վրա, նրա մեջտեղում քանդակված է հավասարաթև խաչ՝ վարսված գնդի վրա: Խաչի հիմքից դուրս են գալիս եռանկյունաձև նախշերով օձեր: Երկրորդ խաչքարի մեջտեղում քանդակված խաչի թևերից դուրս են գալիս ցորենի հասկեր և ոճավորված օձազարդեր: Այս խաչքարերը հավանաբար կոչված են եղել պաշտպանելու երկիրը երաշտից: Երաշտ տարիներին խաչքարի վերևի անցքից ջրով կամ զոհաբերված արյունով ցողել են խաչապատկերը՝ Աստծուց աղերսելով տեղումներ: Մենք հավանական ենք համարում, որ նման արարողությունները Արագածի և Գեղամա լեռներում ջրի պաշտամունքը խորհրդանշող և վիշապներին նվիրված ու մատուցվող հեթանոսական ծեսերի հեռավոր արձագանքն են:

ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԵՐ.- Ավանը հյուսիսային կողմից եզերող բլրաշարքի ստորոտով 6 կմ երկարությամբ ձգվում է Թալինի մեծ դամբարանադաշտը: Սրա տարբեր տեղամասերում կատարված պեղումներից պարզվել է, որ այստեղ թաղումներ կատարվել են սկսած վաղ բրոնզի դարից և անընդհատ շարունակվել մինչև զարգացած միջնադարը: Տարբեր դարաշրջանների պատկանող դամբարաններից շատերը դրված են մեկը մյուսի վրա /նկ. 11/:

Որոշ տեղամասերում պեղված դամբարանների տակ բացվել են բնակելի մեծ շինությունների ավերակներ, որոնք թվագրվում են անտիկ ժամանակաշրջանով: Պեղումներով բացահայտված թաղման ձևերը, ինչպես նաև գտնված իրերը մեծ նշանակություն ունեն Հայկական լեռնաշխարհի պատմության որոշ հարցերի լուսաբանման համար:

Դամբարանների մյուս խումբը Թալինի հյուսիս-արևելյան կողմում է: Դրանք մեկուսի կանգնած խոշոր դամբարանաբլուրներ են, որոնք թվագրվում են միջին և ուշ բրոնզի ժամանակաշրջաններով:

ԳԵՐԵԶՄԱՆՈՑՆԵՐ.- Թալինի Կաթողիկեի շրջակայքում տարածվում է մի ընդարձակ գերեզմանոց, որտեղ թաղումները շարունակվում են մինչև այժմ: Գերեզմանոցը հիմնված է հին շինությունների վրա: Շատ գերեզմանների համար իբրև տապանաքար օգտագործված են խաչեր, եկեղեցուց և անհայտ կառույցներից վերցված ճարտարապետական դետալներ:

Իսկ Թալինի «Տափակ դար» կոչվող բլուրի ստորոտին կա մեկ այլ գերեզմանոց: Այստեղի տապանաքարերը բնորոշ են XVII-XVIII դարերին:

ԲՆԱԿԱՏԵՂԻ.- Սա Թալինից հյուսիս-արևելք ընկած տարածության վրա է: Ունի 6 հա տարածք: Այստեղ պահպանվել են կոպտատաշ տուֆից կառուցված, առանձին կանգնած շինությունների պատեր:

Թալինից Կարմրաշեն տանող ճանապարհի աջ կողմում կան միմյանց կողքի շարված մեծ թվով ավերակներ, որոնք երբեմնի ջրաղացների մնացորդներն են:

XIX դարում կառուցված քաղաքային տիպի շինություններից է թալինցի մեծահարուստ Բաղալի տունը: Սա միհարկանի շինություն է, կամարակապ լուսամուտներով, և կառուցված է սև տուֆից, որ ճակատների վրա սրբատաշ է: Ներկայումս այստեղ տեղավորված է Թալինի տպարանը: Ավանի հրապարակի հարավարևելյան մասում կանգնած նորակառույց շենքի ետևում պահպանվել են խոշոր ծիթահանի ավերակները:

ԱՂԲՅՈՒՐ-ՀՈՒՇԱՐՁԱՆԸ.- Երկրորդ աշխարհամարտում զոհված թալինցիների հիշատակին նվիրված աղբյուր - հուշարձանը կառուցվել է ժողովրդական ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի նախագծով: Այն սև տուֆից է, եռանկյուն ճակտոնով և խուլ կամարաշարերով: Աղբյուր-հուշարձանը կառուցվել է ավանի կենտրոնում, սակայն հետո քանդվել, տեղափոխվել և նույնությամբ վերականգնվել է Թալին-Մաստարա ճանապարհի խաչմերուկում /նկ. 12/:

Նկ. 12 Թալինի աղբյուր-հուշարձանը



Ա Գ Ա Ր Ա Կ

Ագարակ գյուղը գտնվում է Թալինից 26 կմ արևելք: Սրա մասին պատմական տեղեկություններ չկան: Ղ. Ալիշանը այն հիշատակում է որպես ամայի տարածք, մինչդեռ գյուղի շրջակայքում կան տարբեր ժամանակներին վերաբերող բազմաթիվ հուշարձաններ: Գյուղում գոյություն ունի մի ավերակ-եկեղեցի, որից պահպանվում է միայն թաղակապ ծածկով ավանդատունը՝ կառուցված վառ կարմիր տուֆով, ճակատներում սրբատաշ: Սրա կողային պատի մեջ գտնվել է արձանագրության մի բեկոր, որտեղ հիշվում է մեկին այգի նվիրելու մասին: Եկեղեցին հավանաբար կառուցվել է XI-XII դարերում: Նրա շրջակայքում պատահականորեն բացվել են սրբատաշ սև տուֆից կառուցված ջրավազան և գինու XI-XII դարերով թվագրվող խոշոր կարասներ:

ԿՈԹՈՂՆԵՐ.- Գերեզմանոցում, գյուղի արևմտյան խոր կիրճի մեջ հայտնաբերվել են IV-VII դարերի հուշակոթողների խորանարդաձև պատվանդաններ, սյուներ, խոյակներ: Պատվանդանների վրա փորագրված են շրջանակների մեջ առնված հավասարաթև խաչեր, իսկ խոյակները զարդարված են արմավենու պտուղների, ականթի տերևների և զամբյուղների քանդակներով /նկ. 13/:

Գյուղում կան նաև կարմիր տուֆից խաչքարեր: Դրանցից մեկի վրա պատկերված են խաղողի ողկույզներ, աղավնիներ, իսկ խաչաթևերը պաճուճված են մեկը մյուսին

Նկ.13 Կոթողի խոյակ Ագարակից

չկրկնող զարդամոտիվներով, որոնք թվագրված են XII-XIII դարերով: Գերեզմանոցում կան XV-XVI դարերի շինության ավերակներ: Գյուղից դուրս՝ 1-2 կմ շառավղով տարածված են խմբերով ու առանձին դամբարաններ: Դրանք ունեն քարահողային լիցք, իսկ խցերը փորված են ժայռի մեջ: Դրանցից մեկի վրա դրված է տուֆե մեծ ֆալլուս՝ մեգալիթյան պաշտամունքային հուշարձան: Թեև դամբարաններից շատերն ավերված են, սակայն դրանցում գտնվել են փայլանախշ, երկրաչափական պատկերներով զարդարված կավանոթներ, բրոնզե զենքեր, ապարանջաններ, որոնք թվագրվում են ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջաններով: Կիրճի մեջ նկատվում են ջրաղացների մնացորդներ:

ՊԱՐՏԻԶԱԿ

Պարտիզակ գյուղատեղին գտնվում է Ագարակից 2,5 կմ հյուսիս: Երբեմնի գյուղի արևմտյան եզրով անցնող գեղատեսիլ կիրճի մեջ կան մի քանի քարայրներ: Դրանցից մեկի մուտքի առջև մանր քարերով և կրաշաղախով պատ է շարված: Ժայռի մեջ փորված են աստիճաններ՝ ելումուտի համար: Քարայրի մշակութային շերտի ուսումնասիրությունից պարզվել է, որ այն օգտագործվել է ոչ միայն միջնադարում, այլև անտիկ և պատմական ավելի վաղ ժամանակաշրջանում: Գյուղի շրջակայքում կան բրոնզեդարյան դամբարաններ: Բնակատեղիի հարավային կողմի ժայռաբեկորների վրա փորագրված են եղել ջրի ծիսապաշտամունքի մասին ժայռապատկերներ, որոնք ոչնչացվել են ջրամբար կառուցելու հետևանքով:

ԴԻԱՆ

Դիանն ընկնում է Ագարակից 4 կմ հյուսիս-արևելք, բլուրներով և կիրճով շրջափակված գոգավորության մեջ: Սա հարուստ է հուշարձաններով:

ԱՄՐՈՑՆԵՐ.- Գյուղից 2 կմ հարավ, շրջակայքի վրա իշխող բլրի գագաթին կան բրոնզեդարյան ամրոցի ավերակներ:

Դրանք շրջափակված են մեծ որձաքարերից կառուցված, չոր շարվածքի պարսպապատերով: Պատերը պահպանվել են մինչև 1,5 բարձրությամբ: Ամրոցի մոտքը հյուսիսային կողմից է: Ամրոցի տարածքում, ինչպես նաև պարիսպից դուրս, պահպանվել են ուղղանկյուն հատակագծով շինությունների հետքեր, որոնց մի մասը առ այսօր ավերվում է թաղումներով: Այս թաղումների ժամանակ հայտնաբերվել են կենդանիների՝ վաղ երկաթի դարին պատկանող քարե արձանիկների կտորներ, խեցեղեն:



Նկ. 14 IX դարի խաչքար

Մեկ ուրիշ ամրոց կա գյուղից 1,5 կմ հյուսիս: Պահպանված են որձաքարերով շարված պատերը, որոնք թվագրվում են բրոնզեդարյան ժամանակաշրջանով: Գյուղի հարավային եզրին, գետնին նշմարվում են ուղղանկյուն հատակագծով և որձաքարե կանոնավոր շարվածքով խոշոր որոշ կառույցների հետքեր:

ԿՈԹՈՂՆԵՐ.- Գյուղի կենտրոնում կա սև տուֆից կառուցված խորանարդաձև մի պատվանդան, որի մի նիստի մեջտեղում փորագրված է շրջանի մեջ առնված հավասարաթև խաչ: Լքված տներից մեկում պահվում է այդ պատվանդանի վարդագույն տուֆից կերտված քառակող սյունը, որի իրանին փորագրված են խաղողի գալարուն որթեր, կենդանիներ, որոնք շատ հետաքրքիր են : Հիշյալ կոթողները թվագրվում է IV-VII դարերով:

ԽԱՉՔԱՐԵՐ ԵՎ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ.- Գյուղում կան նաև մի քանի խաչքարեր, որոնցից աչքի է ընկնում բազալտից կերտվածը: Նրա վրայի կլոր թևերով խաչի երկու կողմերում քանդակված են երկու սքեմավորներ, որոնք կրում են սրածայր վեղարներ և գավազաններ՝ դեպի խաչը ուղղված: Խաչքարը թվագրվում է IXդարով /նկ. 14/:

Հողային աշխատանքի ժամանակ գյուղամիջում հայտնաբերվել են բուսազարդերով հարուստ (XII-XIII դդ.) բազալտե խաչքարեր:

Գյուղի հյուսիսակազմում կան սալարկղային դամբարաններ:

Բ Ա Յ Ա Զ

Հինավուրց Բայազ գյուղը ափռված է շրջկենտրոնից 20 կմ հյուսիս-արևելք, գեղատեսիլ մի վայրում, երկու կիրճերի միախառնումից առաջացած հրվանդանի վրա: Բայազ անունը առաջին անգամ հիշատակված է Ղ. Ալիշանի երկերում: Իսկ թե ինչպես է կոչվել գյուղը հնում՝ հայտնի չէ: Գյուղի հարավում, կիրճի եզրին կառուցված է Բայազի եկեղեցին: Ըստ ավանդության, այն կառուցել է Արուճի եկեղեցու ճարտարապետի աշակերտը: Թեև եկեղեցու պատերին չկան շինարարական արձանագրություններ, սակայն ճարտարապետական ձևով այն բնորոշ է X-XI դարերին /տախտ .1,գծ. 8/: Եկեղեցին խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ կառույց է, ներսում կիսաշրջան խորանով և զույգ ավանդատներով /նկ. 15/: Նրա մուտքը արևմտյան կողմից է: Կառուցված է վարդագույն տուֆի սրբատաշ մեծ սալերով: Ճակատներն ունեն կարմրակիր կեղծ, գեղազարդային որմնասյուներ:



Նկ. 15 Բայազի եկեղեցին



Նկ. 16 Բնակելի քարայրներ Բայազի կիրճում

Տեղանքը եկեղեցուն, չնայած նրա զուսպ ոճին, հաղորդում է անկրկնելի գեղեցկություն: Կիսավեր եկեղեցին ներկայումս ամբողջությամբ վերականգնվում է:

Գյուղը արևմտքից եզերող կիրճի բնակելի քարայրներից մեկի մեջ պահպանվել է աղյուսաշար մի պատ /նկ. 16/:

Բնակավայրի շրջակայքում կան բրոնզեդարյան դամբարաններ:

Կ Ա Ք Ա Վ Ա Զ Ո Ր

Կաքավաձոր գյուղը շրջկենտրոնից 23 կմ արևելք, Բայազ տանող ճանապարհի վրա է: Գյուղի մասին հիշատակում է Ղ. Ալիշանը: Այն հարուստ է բազմապիսի արժեքավոր հուշարձաններով: Բնակավայրի կենտրոնում պահպանվել են բազիլիկ եկեղեցու ավերակների հետքեր: Նկատելի են հիմնապատերի որոշ հատվածներ, ականթի տերևներով զարդաքանդակներ, որոնց կատարման տեխնիկան բնորոշ է վաղ միջնադարին: Հուշարձանից փոքր հեռու ընկած են որմնասյան խոյակներ: Եկեղեցին կառուցված է եղել վարդագույն տուֆից, ճակատներում՝ սրբատաշ: Գյուղի արևելյան մասում հայտնաբերվել է IV-VII դարերի քառակող մի կոթող՝ դարձյալ վարդագույն տուֆից: Նրա մի նիստի մակերեսին քանդակված է Տրդատը՝ խոզի գլխով. նրա հագին

կա թագավորական շքեղ հանդերձանք: Աղաչավորի նրա հայացքը ուղղված է վեր, ուր դրվագված է Գրիգոր Լուսավորիչը:

Գյուղի ձախ կողմով անցնող կիրճի եզրին պահպանվում են խոյի ու ձիու տեսքով տապանաքարեր, որ բնորոշ են XVI-XVII դդ.:

ԱՄՐՈՑԸ.- Գյուղից 0,5 կմ հարավ-արևելք, խոր կիրճերի միացումից առաջացած հրվանդանի վրա բազմաշերտ ամրոցի ավերակներ են: Հրվանդանը եզերված է տեղական մանր քարերից կառուցված պարիսպով: Ամրոցի ներսում պահպանվել են ուղղանկյուն հատակագծով բնակարանների հետքեր, կրաշաղախով սվաղված հորեր, քառակող կոթողի պատվանդան, ինչպես նաև եղել են շատ ուշ ժամանակի քրիստոնեական թաղումներ: Ամրոցում, սակայն, մեծ տարածություն են գրավում ժայռափոր կառույցները, որոնց մի մասը ունի պաշտամունքային նշանակություն, մյուս մասը՝ տնտեսական: Բնական ժայռասալերի վրա փորված են տարբեր չափերի շրջանաձև և ուղղանկյուն փոսեր: Դրանց մեծ մասը ունեցել է հանովի փական-դռնակներ, որոնք հավանաբար փայտից են եղել: Յուրաքանչյուր ժայռասալի վրա եղած փոսերը իրար հետ կապված են որոշակի համակարգով: Պաշտամունքային հատուկ արարողությունների հետ կապված ժայռափորվածքները պարիսպից դուրս են, կիրճի ձախ եզրին: Դրանք միակտոր ժայռի գագաթին փորված կլոր և ուղղանկյուն փոսեր են: Ժայռի գագաթը բարձանալու համար պատրաստված են հատուկ ճանապահ և աստիճաններ: Կառույցը, հավանաբար, կապված է արևի կամ ջրի պաշտամունքի հետ և Հայաստանի պաշտամունքային սակավաթիվ կենտրոններից է եղել: Ուսումնասիրությունները վկայում են, որ ամրոցը հիմնադրվել է մ.թ.ա. առաջին հազարամյակում, այնուհետև գոյատևել է անտիկ և վաղ միջնադարյան ժամանակաշրջաններում:

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՅՈՒՂԱՏԵՂԻՆ.- Կաքավաձոր գյուղից 0,5 կմ արևելք Բայսզ տանող ճանապարհի երկու կողմերի ավերակները վկայում են երբեմնի բնակավայրի՝ գյուղի մասին: Շրջակայքում, հատկապես գյուղի հարավային մասում, կան առանձին կանգնած մենհիրներ և դամբարանաբլուրներ:

Ա Վ Թ Ո Ն Ա

Կաքավաձորից հյուսիս-արևմուտք տանող ճանապարհը մտնում է Ավթոնա բարձրադիր լեռնային գյուղը: Ավթոնան շրջակայքի վրա իշխող բարձրունքի գագաթին է, շրջկենտրոնից 29 կմ հեռու: Գյուղի մեջ և առանձին տների բակերում պահպանվել են վարդագույն տուֆից քառակող կոթողների և խաչքարերի բեկորներ: Կոթողները թվագրվում են IV-VII դդ., իսկ խաչքարերը՝ IX-XIII դդ.: Գյուղի հարավային մասում կան տուֆե քարազանգվածների մեջ փորված ուղղանկյուն փոսեր: Դրանց մի մասը ծառայել է որպես հնադարյան սարկոֆագներ, իսկ մյուս մասը՝ խաչքարերի պատվանդաններ: Այս վայրից քիչ հեռու նկատելի են կիկլոպյան շարվածքով պատերի հետքեր: Գյուղի շրջակայքում կան առանձին դամբարանաբլուրներ:

Վ Ե Ր Ի Ն Բ Ա Զ Մ Ա Բ Ե Ր Դ

Վերին Բազմաբերդ գյուղը շրջկենտրոնից 17 կմ հյուսիս-արևելք է, բլուրներով շրջապատված տափարակի վրա: Գյուղում հայտնի են տարբեր ժամանակաշրջանին պատկանող մի շարք հուշարձաններ: Գյուղի կոլտնտեսության գրասենյակը կառուցվել է երբեմնի եկեղեցու ավերակների վրա: Եկեղեցու կլոր բարձակով սյան խարիսխը ընկած է գյուղ մտնող ճանապարհի եզրին: Խարիսխը կարմրավուն տուֆից է և թվագրվում է վաղ միջնադարյան ժամանակաշրջանով: Գյուղի հարավարևելյան եզրին կան ժայռի մեջ փորված ստորգետնյա փոքր մատուռ և խաչքարեր, որոնք պատկանում են զարգացած միջնադարին: Բնակավայրի հարավային մասում, շրջակայքի վրա իշխող բարձրունքի գագաթին պահպանվել են մ.թ.ա. առաջին հազարամյակով թվագրվող ամրոցի ավերակներ: Թեև ամրոցի տարածքը այժմ խաթարվում է մեր օրերի թաղումներով, այդուհան-

դերձ մնում են բնակարանների և պարիսպների հետքեր: Գյուղի շրջակայքում կան նաև դամբարաններ, որոնցից շատերի թաղման խցերը փորված են ժայռի մեջ: Գյուղից 1 կմ արևմուտք, Ն. Սասնաշեն տանող ճանապարհի երկու կողմերում նկատվում են գյուղատեղիի հետքեր:

ՆԵՐՔԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ

Բնակավայրը շրջկենտրոնից 17 կմ արևելք է, բլուրներով շրջապատված գոգավորության մեջ: Անգլիացի ճանապարհորդ Լինչը մեկ օր գիշերելով այստեղ, գրել է, որ Մասիս լեռը և Արարատյան դաշտավայրը ամեն կողմերից ավելի գեղեցիկ տեսք ունեն Բազմաբերդ գյուղից: Բնակատեղին հայտնի է մի շարք հուշարձաններով:

ՎԱՆՔԻ ԲԼՈՒՐԸ.- Գյուղի թիկունքում բարձրացող բլրի գագաթին եղել են մ.թ.ա. առաջին հազարամյակով թվագրվող փոքր ամրոց և գյուղատեղի, որոնցից մնացել են միայն ավերակներ: Կան նաև որձաքարով կառուցված պարսպապատերի և կացարանների հետքեր:

ՆԵՐՔԻՆ ՀԱՆԴԱՄԱՍ ԲՆԱԿԱՏԵՂԻՆ.- Գյուղից 2 կմ հարավ, բլրի գագաթին տարածվում են ավերակներ, որոնք բրոնզեդարյան մեծ բնակավայրի հետքերն են: Բնակավայրի կառուցապատումը բաղկացած է եղել իրար կիպ բազմաթիվ կացարանային համալիրներից: Տեղանքից հյուսիս երևում է մեծ դամբարանաբլուրը, որտեղ հայտնաբերվել են բրոնզե գուրզ և նետասլաքներ: Դրանք պահվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում:

«ԲԱԶՄԱԲԵՐԴ 1».- Եղել է գյուղից 3 կմ հարավ-արևմուտք, Աշնակ տանող հին ճանապարհի եզրին, փոքր բլրի վրա ; Անկանոն, քառանկյուն հատակագծով է : Կիկլոպյան շարվածքով պարսպապատերը պահպանված են 2 մետր բարձրությամբ: Ամրոցի առջև փռված են ավերակներ, որոնք երբեմնի բնակավայրի մնացորդներն են: Պեղումներից պարզվել է, որ մոտ 1հա տարածքով ամրոցը բազմաշերտ մի հուշարձան է և թվագրվում է մ.թ.ա. III և մ.թ. III դարերով:

«ԲԱԶՄԱԲԵՐԴ 2».- Վերոհիշյալից 1 կմ արևմուտք, բարձր բլրի վրայի ավերակները վկայում են երբեմնի ամրոցի՝ «Բազմաբերդ 2-ի» մասին: Ամրոցի պարսպապատերը և բնակարանային համալիրները կառուցված են միջին մեծության բազալտե քարերից: Պարսպապատերը պահպանված են մինչև 1 մետր բարձրությամբ. դրանց արևմտյան թևում մուտքն է: Ներսի տարածքում երևում են ուղղանկյուն հատակագծով կացարանների պատեր:

Հետախուզական պեղումներից պարզվել է, որ այս ամրոցը ևս պատկանում է անտիկ դարաշրջանին և թվագրվում է մ.թ.ա. III-I դարերով:

ՄԻՐՈՅԻ ՔԱՐԱՆՋԱՎԸ.- Այս բնակատեղին տարածվում է գյուղից 3 կմ հարավ: Այստեղ պահպանվել են որոշ բնակարանների հետքեր, քարերի մեջ փորված սանդեր: Ուսումնասիրությունները վկայում են, որ այն գոյատևել է մինչև մ.թ.ա. III հազարամյակի վերջը:

ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԵՐ.- Գյուղի արևելյան մասում, Երևան տանող ճանապարհին մոտ կան բրոնզեդարյան դամբարանների առանձին խմբեր: Բրոնզեդարյան մյուս դամբարանադաշտը գյուղից 1 կմ հարավ է և տարածվելով արևմուտք, հասնում է մինչև Ներքին Սասնաշենի հետ եղած հողային սահմանը: Մ.թ.ա. I հազարամյակով թվագրվող դամբարանախմբեր կան գյուղից 2,5 կմ հարավ-արևելքում՝ ցածրադիր բլուրների լանջերին: Մեկ այլ խոշոր դամբարանադաշտ հայտնի է գյուղից 3,5 կմ հարավ-արևելք տարածվող հանդամասերում: Այս դամբարաններից մեկի պեղումների ժամանակ գտնվել է արծաթե խոյագլուխ ապարանջան, որը թվագրվում է մ.թ.ա. VI-IV դարերով:

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐ.- «Կարմիր բլուր» կոչվող հանդամասում, որը բնակավայրից հեռու է 4 կմ և հարավ, աչքի է ընկնում հուշարձանների հետաքրքիր մի խմբով: Ձորակի ձախ ափին սփռված են տարբեր մեծության բազմաթիվ տուֆասալեր, որոնց վրա փորված են 330-ից ավելի տարբեր համադրությունների և չափերի փոսիկներ: Դրանց կենտրոնում կան 15-20 սմ խորությամբ փոքր անցքեր: Ըստ երևույթին այստեղ եղել է պաշտամունքային

կենտրոն, որը, հավանաբար, կապված է եղել բեղմնավորության կամ ջրի պաշտամունքի հետ:

«ՀԻՆ ՀԱՆՔԵՐԸ».- Միջնադարում գյուղի շրջակայքում շահագործվել են տարբեր բնույթի քարհանքեր: Քարերի վրա պահպանվել են այդ դարաշրջանում օգտագործված լայն սեպերի հետքեր: Կան նաև տեղում կիսամաշ բազալտից շինված ջրաղացքարեր:

ՆԵՐՔԻՆ ՍԱՍՆԱՇԵՆ

Ամբողջ հուշարձաններով հարուստ է նաև Թալինից 14 կմ հյուսիս-արևելք գտնվող Ներքին Սասնաշեն գյուղը:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ.- Բնակավայրի կենտրոնում կա ավերակ մի եկեղեցի, որը Հայաստանի վաղ միջնադարյան ճարտարապետության մեջ հաճախադեպ կենտրոնագմբեթ փոքր հուշարձաններից է: Հանվել են նրա երեսապատման գրեթե բոլոր քարերը: Հիմնապատերի պահպանված քարերից ենթադրվում է, որ այն կառուցված է եղել կարմիր և վարդագույն տուֆի մեծ, սրբատաշ քարերով: Եկեղեցին ունի խաչաձև հատակագիծ, որի կիսաշրջանաձև թևերը առնված են ուղղանկյուն պատերի մեջ: Ըստ մասնագետների եզրակացության, այն ծավալով ավելի մեծ է Թալինի, Զրվեժի, Քարաշամբի, Պեմզաշենի նույնատիպ եկեղեցիներից /տախտ.1,գծ.5/:

Գյուղից 1 կմ հարավ-արևմուտք, բլրի գագաթին կա բազիլիկ եկեղեցի: Սա հայտնաբերվել է պեղումների շնորհիվ: Միանավ, կիսաշրջան խորանով կառույց է: Պատերը պահպանված են միչև 1,5 մետր բարձրությամբ և կառուցված են գորշ խոշոր տուֆաքարերով: Պեղումներից գտնվել են եկեղեցուն պատկանող քանդակազարդ քարեր, որոնցով և հնարավոր է դառնում այն թվագրել V դարով:

ՄԱՏՈՒՌԸ.- Բնակավայրից 2 կմ հարավ նշմարվում են վաղ շրջանի դամբարանի վրա կառուցված փոքր մատուռի հիմնապատերը: Պատերից ընկած քարերի վրա կան որմնանկարների փոքր հատվածներ, ինչպես նաև գունային հետքեր:

ԱՄՐՈՑՆԵՐԸ.- Միանավ բազիլիկ եկեղեցուց արևմուտք նկատվում են վաղ միջնադարյան ամրոցի պարսպապատերի և ներսի բնակարանային համալիրների հետքեր:

Մյուս ամրոցը գյուղի ծայրում է, այսօրվա գերեզմանատան տարածքում. նրանից պահպանվել են միայն հազիվ նկատելի հետքեր, ըստ որոնց այն թվագրվում է մ.թ.ա. առաջին հազարամյակով:

ՏԱՓԱԿ ԲԼՐԻ ԱՄՐՈՑԸ.- Գյուղից 2 կմ հարավ, եռանկյունաձև բլրի վրա է:Բլրի գագաթը շրջապատված է կիկլոպյան շարվածքի հզոր պարսպապատերով: Ներսում, ինչպես նաև պարիսպների շրջագծից դուրս նկատելի են խոշոր չափերի բնակարանների հետքեր: Ամրոցից վեր՝ դարավանդի վրա, կա մեծատարած արհեստական լճակ, որը չորս կողմից շրջափակված է մանր քարերի պատվարով: Վերգետնյա հետազոտությունները ցույց են տալիս, որ ամրոցը հիմնադրվել է մ.թ.ա. առաջին հազարամյակում, իսկ կործանվելուց հետո նորից բնակեցվել է անտիկ դարաշրջանում:

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԿԱՌՈՒՅՑԸ.-Գյուղից 1 կմ հարավ-արևելք, խոր ձորի աջ եզրին մնում են անորոշ մի կառույցի ավերակներ: Այն համեմատաբար փոքր չափերի շինություն է, որի հիմնապատերը շարված են կոպտատաշ տուֆով և կրաշաղախի լիցքով: Դատելով ներսում եղած հարկաբաժիններից, այն քաղաքացիական կառույց է եղել:

ԳՅՈՒՂԱՏԵՂԻՆԵՐԸ.- Ուշ անտիկ շրջանով և վաղ միջնադարով թվագրվող մի գյուղատեղի գտնվել է Ներքին Սասնաշենից 2,5 կմ հարավ: Այս բնակատեղին կազմված է առանձին կանգնած, ուղղանկյուն հատակագծով կացարանային համալիրների փոքր խմբերից: Միջնադարյան մեկ այլ գյուղատեղի գտնվել է հիշյալ բնակավայրից արևմուտք՝ ձորի աջ եզրին: Չորանոցների գյուղատեղին Ներքին Սասնաշենից հեռու է 4 կմ դեպի հարավ-արևելք: Այստեղ պահպանվել են տեղական կոպիտ քարերով կառուցված բնակարանային համալիրների խմբեր և կենդանակերպ տապանաքարերով գերեզմանոց, որը թվագրվում է XV-XVI դարերով:

Նկ .17 Քանդակապատկերներով կոթող Ն .Սասնաշենից

ԿՈԹՈՂՆԵՐԸ.- Հայկական վաղ միջնադարյան արվեստի ասպարեզում մեծ հետաքրքրություն են ներկայացնում գյուղում գտնված երկու կոթողներ: Առաջինը կարմրավուն տուֆից խորանարդաձև պատվանդան է, որի մի նիստին փորագրված է Դանիելը առյուծների գբում աստվածաշնչային դրվագը: Առյուծները պատկերված են նստած՝ հազվադեպ դիրքում և քանդակված են մեծ արվեստով: Պատվանդանի մի մասը ջարդված է. երևում են առյուծների ոճավորված պոչերի և մարմինների միայն կեսը: Նման տեսարանով քանդակները քիչ են. դրացից կան Ավանի, Շիրակի դաշտավայրի և բյուզանդական կիրառական արվեստի նմուշների վրա /նկ. 17/:

Հաջորդը, բազիլիկ եկեղեցու մոտ, գորշ տուֆաքարից կլոր սյունն է, գոտևորված երեք շարք քանդակապատկերներով: Վերևի շարքում պատկերված են հռիփսիմյան կույսերը և Գրիգոր Լուսավորիչը՝ նահատակի հանդերձանքով: Երկրորդ շարքում Մարիամ Աստվածածինն է, ստորինում՝

Նկ.18 Քառակող սյունանման կոթող

արքայական շքեղ հանդերձները հագին, խոզի գլխով Տրդատը հայացքով փրկություն է աղերսում վերևի պատկերներից:

Այս կոթողները թվագրվում են IV-VII դարերով / նկ. 18 /:

Գյուղի շրջակայքում կան նաև խաչքարերի բազմաթիվ բեկորներ, որ բնորոշ են XI-XII դարերին:

ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԵՐԸ.- Ներքին Սասնաշենի տարածքում և նրա շրջակայքում նկատելի են բազմաթիվ դամբարանաբլուրների խմբեր, որոնք պատահական պեղումներում գտնված իրերով թվագրվում են բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններով:

ՎԵՐԻՆ ՍԱՍՆԱՇԵՆ

Վերին Սասնաշեն բնակավայրը ընկնում է Ներքին Սասնաշենից 1,5 կմ հյուսիս, սեղանաձև բարձունքի վրա, Արագածի ալպյան մարգագետինների եզրին: Այստեղի հուշարձաններից մեծ հետաքրքրություն է ներկայացնում գյուղի մշակույթի տան մոտ ընկած ձկնակերպ վիշապակոթողը, որը վարդագույն տուֆից է և ունի երկու մետր բարձրություն: Վիշապը, որպես պաշտամունքային կոթող, կանգնեցված է եղել Վերին Սասնաշենից 10-12 կմ հյուսիս, ալպյան մարգագետիններում բխող սառնորակ աղբյուրների ակունքի մոտ: 1976 թվականին հորդառատ անձրևներից առաջացած հեղեղները այն տեղահանել և քշել-բերել են գյուղ / նկ. 19 /:



Նկ.19 Ձկնակերպ վիշապակոթող

«Պետոյի հանդ» կոչվող տեղամասում, որը գյուղից հեռու է 2 կմ, պահպանվել է ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջաններին պատկանող մեծ դամբարանախմբեր: Դրանք ձգվում են շրջկենտրոնից Վերին Սասնաշեն տանող

Նկ. 20
Զորավար Անդրանիկի կիսանդրին

ասֆալտապատ ճանապարհի երկու կողմերում: Առանձին դամբանախմբեր կան նաև գյուղի արևմտյան մասում:

Մշակույթի տան առջև ծաղիկներով շրջապատված մեծ քարաբեկորների վրա վեր է խոյանում հայ ազգային հերոս, զորավար Անդրանիկի բրոնզե կիսանդրին /նկ. 20/ , իսկ քիչ հեռու՝ երկրորդ աշխարհամարտում զոհված Վերին Սասնաշենցի մարտիկների հիշատակին նվիրված հուշարձանը:

ԴԱՎԹԱՇԵՆ

Դավթաշեն գյուղն ընկնում է Թալինից 12 կմ արևելք: Նրա հարավային մասում, ներկայիս գերեզմանոցը շրջապատող այգու մեջ նշմարվում է քարե զրահով դամբանաթմբեր: Գյուղից 1կմ հյուսիս-արևմուտք խոր ձորի աջ ափին պահպանվել է մի փոքր ամրոց: Ամրոցի պատերը կառուցված են կոպտատաշ տուֆից և պահպանված են 1 մետր բարձրությամբ: Ամրոցը թվագրվում է վաղ միջնադարով:

ԻՐԻՆԴ

Իրինդ գյուղը շրջկենտրոնից 14 կմ հյուսիս-արևելք է: Իրինդը և նրա շրջակայքը, ունենալով բնակության համար հարմար դիրք, ծառայել է մարդուն և օգտագործվել դեռ հազարամյակներ առաջ: Հայկական վաղ միջնադարյան եկեղեցական ճարտարապետության եզակի նմուշներից մեկը հանդիսացող **ԻՐԻՆԴԻ** եկեղեցին համանուն բնակավայրի կենտրոնում է: Այն պատկանում է բազմախորան եկեղեցիների տիպին /նկ. 21/. ունի ութխորան և շրջանաձև հատակագիծ: Նրա արևմտյան խորանը փոխարինված է ուղղանկյուն նավով, որով եկեղեցին տարբերվում է Եղվարդի նմանատիպ հուշարձաններից: Եկեղեցին կառուցված է վարդագույն տուֆից, ճակատների վրա սրբատաշ , ունի երկաստիճան հիմնախորան / տախտ. 1,գծ.7/:

Ճակատներին կան խորշեր և կամարների գալարահյուս զարդաքանդակներ: Թմբուկի լուսամուտները ունեն պայտաձև կամարներ: Կրող կիսասյուներից մեկի վրա պահպանվել է տղամարդու մի բարձրաքանդակ, որը, հավանաբար, պատկերում է եկեղեցու ճարտարապետին: Նման պատկեր հայտնի է նաև Զվարթնոցից: Եկեղեցու ներսում ընկած է քարե մեծ դուռը, իսկ պատի քարերից մեկի վրա պահպանված են երկաթագիր տառերով արձանագրության փոքր հատված: Առանց շինարարական վկայագրի, սակայն, ըստ համանման այլ հուշարձանների հետ համեմատության և զուգադրության, այն ևս բնութագրվում է VII դարով: Հետքրքրական է կապտավուն տուֆից կառուցված քառակող կոթողի բեկորը: Սրա վրա փորագրված են վարդակներ, գազանի դունչ և հրեշ, որոնք, անշուշտ,կապված են հայկական հեթանոսական շրջանի առասպելաբանության հետ:

ԱՄՐՈՑԸ.- Գյուղի հյուսիս-արևելյան մասում բարձրացող բլրի վրա եղել է մի ամրոց, որից պահպանվել են մշակութային տարբեր շերտերով հարուստ ավերակները: Բլրի գագաթին ժայռերը կտրված-հարթեցված են բնակարանների և պարիսպների կառուցման համար: Ուղղանկյուն կամ քառակուսի հատակագծով բազմաթիվ հետքեր են նկատվում նաև բլրի լանջերին և ստորոտում: Վերգետնյա նյութով այս ամրոց-բնակա-



Նկ. 21
Իրինդի եկեղեցին

տեղին թվագրվում է մ.թ.ա. III հազարամյակի վերջով:

ԳՅՈՒՂԱՏԵՂԻՆ. - Իրինդից 2 կմ հյուսիս-արևելք խարամահանքերի մոտ կան ուշ միջնադարյան գյուղատեղի ավերակներ, իսկ շրջակայքում՝ բնակության հետքերով քարանձավներ:

ԽԱՉՔԱՐԵՐԸ. - Գյուղի արևելյան մասում, բարձունքի վրա կա ճանապարհացույց մի խաչքար, որը տեսանելի է դեռ հեռվից: Բազալտե այս խաչքարի մեջտեղում փորագրված է կլորավուն թևերով մեծ խաչ, որը թվագրվում է X դարով: Խաչքարին պատվանդան է ծառայում միակտոր ժայռը: XII-XIII դդ. խաչքարերի մի փոքրիկ խումբ կա գյուղից 1,5 կմ հարավ-արևմուտք, ձորի մոտ բխող հորդառատ աղբյուրի ակունքի մոտ /դրանք, հավանաբար,ունեն ջրապահպան նշանակություն /:

ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԵՐԸ.- Դրանցից առաջինը ամրոցի շրջակայքում է և տարածվում է մի քանի հեկտար: Ըստ պատահական պեղումներից գտնված իրերի, այն թվագրվում է բրոնզի ժամանակաշրջանի տարբեր փուլերով: Երկրորդ դամբարանադաշտը սկսվում է գյուղի հարավային մասում՝ ծխախոտի չորանոցի մոտից և մոտ 2 կմ տարածվում է ասֆալտապատ ճանապարհի երկու կողմերում:

Գյուղի արևմտյան մասում կառուցված է Եղեռնի և երկրորդ աշխարհամարտում զոհված իրինդցիների միացյալ հուշահամալիրը: Սա կառուցվել է ճարտարապետ Արծրուն Գալիկյանի նախագծով: Հուշարձանը ներկայացնում է թևատարած արծիվ: Կենտրոնում բարձրանում է փոքրիկ մի գմբեթ, որից կախված են զանգեր: Արծվի թևերից մեկը նվիրված է Սասունի տարբեր գյուղերից բնահան եղած իրինդցիների հերոսամարտին, մյուսը՝ Հայրենական պատերազմից չվերադարձած զինվորների հիշատակին: Հուշահամալիրը լրացված է մի շարք ցայտաղբյուրներով, որոնք խորհրդանշում են կյանքի հարատևությունը: Հուշարձանը կառուցված է սրբատաշ վառ կարմիր տուֆով: Նմանատիպ հուշարձանների մեջ լավագույներից մեկն է:

ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ

Կաթնաղբյուր գյուղը ևս հարուստ է հուշարձաններով, որոնց մեծ մասը նոր է մտնում գիտական շրջանառության մեջ: Հայտնի չէ, թե ինչպես է կոչվել բնակավայրը հնում, սակայն Ղ. Ալիշանը գտնում է, որ գյուղի Մեհրիբան նախկին անվանումը ծագել է Մեհրիվան անունից :

ԵԿԵՂԵՑԻՆ.- Կաթնաղբյուրի եկեղեցու հիմքերը գյուղի մշակույթի տան մոտ են և ծածկված են հողի հաստ շերտով: Դրանց մեծ մասը 1954 թվականին ընկել է Երևան-Գյումրի ճանապարհի տակ: Մասնակի պեղումների ժամանակ բացվել են ուշ շրջանի նրան կից քառակուսի ամբարներ և պատերի մեջ շարված քառակող կոթողներ, ինչպես նաև XI-XII դարերով թվագրվող նվիրատվական արձանագրությունների բեկորներ: Պեղումներով բացված նրա արևելյան պատի մի մեծ հատված կառուցված է VII դարին բնորոշ սրբատաշ խոշոր քարերի շարվածքով: Ներկայումս եկեղեցու հիմքերը վրա կառուցված է փոքր սրբատեղի, որի մեջ հավաքված են IX-XIII դարերի գեղաքանդակ խաչքարեր: Եկեղեցու շրջակայքի միջնադարյան գերեզմանատան տարածքում գտնվել են նաև խաչքարերի այլ բեկորներ:

ԿՈԹՈՂՆԵՐԸ.- Բնակավայրի մեջ և եկեղեցու շրջակայքում գտնվել են մի շարք քառակող կոթողներ և դրանց խորանարդաձև պատվանդանները /նկ. 22/:

Քառակող կոթողներից մեկի վրա քանդակված են կլոր վարդակներ, հավասարաթև խաչեր, որոնց փաթաթված բարձրանում են խաղողի ողկույզաբեռ որթերը /այս կոթողի մի կողմը հետագայում փորել, դարձրել են մսուրք/: Եկեղեցու մոտի սյունանման կոթողի խոյակի վրա քանդակված են դեմ-դիմաց կանգնած եղջերուներ, արծվանման թռչուններ՝ շրջապատված ականթի տերևներով և ոճավորված բուսազարդերով /նկ. 23/:

Այս կոթողների պատկերաքանդակները արված են մեծ հմտությամբ և թվագրվում են IV -VII դարերով:

Գյուղից 0,5 կմ հարավ, ժամանակակից գերեզմանոցի մոտակայքում պահպանվել են բրոնզեդարյան մի բնակավայրի ավերակներ: Այն արևմտյան կողմից պատված է պա-

ռիսպներով, իսկ մյուս կողմից՝ խոր ծորով: Այնտեղ տարածվում են նաև մեծ դամբարանաբլուրների խմբեր:

ԱՎԱԶԱՀԱՆՔԻ ԲԵՐԴԸ.- Տեղադրված է գյուղի արևելյան կողմում, շրջակայքի վրա իշխող հրաբխային ծագում ունեցող բլրի վրա: Բերդը գրաղեցնում է բլրի գագաթնամասը և տարածված է դրա լանջերին: Գետնին երևում են քառակուսի աշտարակներով և կոպտատաշ տուֆ քարից կանոնավոր շարվածքով պարիսպներ: Պարիսպներից ներս ուղղանկյուն հատակագծով բնակարանային համալիրներ են: Բլրի լանջերը պատված են դամբարանադաշտով: Վերգետնյա նյութի, պատահական գտնված դրամների և այլ գտածոների հիման վրա, ամրոցը թվագրվում է մ.թ.ա. II-I դարերով: Ամրոցից քիչ ներքև պեղումներով բացվել է քնջութի կամ կտավատի ծիթհան ժայռափոր մի համալիր:

Նկ. 22 Քառակող կոթող

«ՉԱՔԱՐԻ ԲԵՐԴ» ԱՄՐՈՑԸ.- Ամրոց-բնակավայրը իր կառուցվածքային բնույթով հայկական վաղ միջնադարյան եզակի հուշարձաններից է, որը վերջին տարիներին պեղվել է ամբողջությամբ: Այն կառուցել են հայոց Արշակունիները միանվագ, նախորոք կազմված նախագծով, որպես զորանոց-բնակավայր:Ամրոցը Կաթնաղբյուր գյուղից 1,5կմ հարավ-արևելք է, երկու ծորերի միախառնումից առաջացած հրվանդանի վրա: Ներկայումս ամրոց-բնակավայրը Երևան-Գյումրի ավտոմայրուղու շինարարության հետևանքով բաժանված է երկու հատվածի: «Չաքարի բերդը» հրվանդանի ներքին և վերին դարավանդների վրա է իր 1 հա տարածքով: Պաշտպանական առաջին գոտին հրվանդանի ստորին մասում է: Չորի հատակում առաջին մուտքից սկսվում է ժայռափոր մի ճանապարհ,

Նկ. 23 Սյունատիպ կոթողի բեկոր

որը քարե պտուտավոր սանդուղքով բարձրանում է մինչև ամրոցի պաշտպանական ներքին գոտու միջի երկրորդ մուտքը: Պաշտպանական երկու գոտիների պարիսպները ունեն 2,5-3,2 - ական մետր հաստություն և կոպտատաշ տուֆ քարից են: Հյուսիսային մասում պարսպապատը հաստացված է կրկնակի և հասնում է մինչև 5,4 մետր հաստության: Պարիսպները ամրացված են որմնահեցերով և քառակուսի աշտարակներով: Ներքին պարսպապատերը պաշտպանական նշանակությունից զատ ունեցել են նաև տնտեսական կիրառություն: Դրանցում կառուցվել են մթերանոց-ամբարներ, ուր պահվել են հացահատիկի պաշարներ: «Չաքարի բերդի» արտաքին պաշտպանական գոտուց ներս, այնտեղ, ուր հրվանդանի ստորին մասն է, պեղումներով բացվել են ժայռափոր մի շարք կառույցներ. սրահավոր եկեղեցի, հավաքույթների համար նախատեսված քարե նստարաններով փոքր հրապարակ, երկհարկանի շինության ստորին հարկը, անասուններ կերակրելու քարե մսուրքներ, ինչպես նաև այս կառույցները հոսքաջրերից պաշտպանող ժայռափոր մի առու, որը սկիզբ է առնում հրվանդանի գագաթից: Պարիսպների ներքին գոտուց ներս պեղվել են բնակարանային համալիրներ: Հրվանդանի վերևում բնակելի կառուցապատումը իրականացված է համալիրների կանոնավոր հատակագծման սկզբունքով և հատակագծով ունի հնգանկյան ձև: Այստեղ կա փողոցների քառանկյուն փակ ցանց: Փողոցների վրա բացվում են երկու կողմերում շինված բնակարանների մուտքերը: Բնակելի համալիրները ունեն միանման չափեր և ձևավորում. սենյակի մեջտեղում տուֆե քառանկյուն օջախ, քարե նստարաններ, սրբատաշ տուֆից հացահատիկի ամբարներ և հատակի ժայռի մեջ փորված հորեր: Բնակարանների պատերը սվաղված են եղել կավով, փայտե սյուների վրա շինվել է հարթ տանիք: Պահպանված սյան խարիսխներից առանձնանում է մեկը: Այն կարմիր տուֆից է, բազմանկյուն կողերով, կլոր բարձակով ու զարդարված հավասարաթև խաչի և կենաց ծառերի պատկերներով /նկ. 24/: Խարիսխը առայժմ եզակի է Հայաստանում:

Այսպիսով, այստեղի պեղումները բացահայտեցին գիտությանը մինչև այժմ անհայտ նոր տիպի մի բնակավայր, որը թվագրվում է մ.թ. III-V դարերի ժամանակահատվածով:

ՄԵՆԱՎՈՐ ԿԱՌՈՒՅՑԸ. - «Զաքարի բերդ» ամրոց-բնակավայրից արևմուտք, ծորակի պռնկին կան ավերակներ, որոնք, ենթադրված է, դաստակերտի նմանվող մեծ համալիրի մնացորդներ են: Այն բաղկացած է եղել բազմաթիվ բաժանմունքներից: Պատերը շարված են կոպտատաշ տուֆով: Ըստ վերգետնյա հետազոտությունների, հուշարձանը թվագրվում է վաղ միջնադարով: Շրջակայքում կան ժայռասալերի մեջ փորված սարկոֆագներ:



Նկ. 24 Բնակելի համալիրի հատվածը «Զաքարի բերդ» ամրոցի տարածքում

ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԸ. - Կաթնաղբյուր գյուղի շրջակայքում բազմաթիվ են դամբարանները, որոնք կազմում են առանձին դամբարանադաշտեր: Դամբարանադաշտերից մեկը գյուղի արևմտյան մասում է՝ «Հովհաննեսի ձոր» կոչվող հանդամասում: Այն ունի մի քանի հեկտար տարածք: Մասնակի պեղումներից պարզվել է, որ դրանք մեծ չափերի սալարկղային դամբարաններ են, որտեղ գտնված իրերը թվագրվում են վաղ երկաթի դարաշրջանով: Մյուս դամբարանադաշտն ընկնում է գյուղի արևելյան կողմի ձորի երկու եզրերին և շրջակա բլուրների լանջերին:

Դրանք միջին չափերի դամբարանաբլուրներ են, որոնք թվագրվում են մ.թ.ա. II-I հազարամյակներով:

Ա Շ Ն Ա Կ

Աշնակ գյուղը Կաթնաղբյուրից 6 կմ հարավ է, Թալինից՝ արևելք: Այն նախալեռնային գոտում է, նույնանուն դարավանդի վրա: Նախկին գյուղատեղին գտնվել է դարավանդի արևելյան կողմի ձորի հրվանդանի վրա և բնակելի է եղել մինչև XX դարի 60-ական թվականները: Աշնակի մասին առաջին հիշատակությունը գալիս է V դարից: Խոսելով Վարդանանց պատերազմի մասին և անդրադառնալով Վասակ Սյունեցու գործունեությանը, Եղիշեն նշում է. ***«Հեռացել է քրիստոնեության ուխտից և ավերել հայոց աշխարհի շատ տեղերը, մանավանդ արքունի ծմեռոցները, որոնք զորքի կայաններն էին, Գառնին և Երամոնսը և Դրասխանակերտը, Մեծ Դաստակերտը, Վարդանաշատը և Օշական ամրոցը, Փառախոտը, Սարդյանքը, Չողակերտ ավանը և Արմավիրի բերդը, Կուաշ ավանը, Արուճը, Աշնակը և ամբողջ Արագածոտնը ...»***: Զարգացած միջնադարում Արագածոտնը դառնում է Բագրատունիների տիրույթը և դրանով իսկ ընդգրկվում է հռչակավոր Անի քաղաքի տնտեսական և քաղաքական ոլորտի մեջ:

Սակայն գավառի տարածքում շատ գյուղեր, այդ թվում նաև Աշնակը, շուտով դառնում են առուծախի առարկա:

Նշված ժամանակաշրջանում Աշնակը Պետրոս Գետադարձ կաթողիկոսի սեփականությունն էր: Կաթողիկոսը հետագայում գյուղը նվիրում է Ապլղարիբ Պահլավունուն: Պահլավունին, իր հերթին, Անիում կառուցելով սբ. Փրկիչ եկեղեցին,Աշնակ գյուղը նվիրում է քաղաքին համապատասխան վավերագրով. ***«Հայոց ՆՀԵ /1036/ թվականին մեծափառ և տիեզերակալ Սմբատ թագավորի և նրա որդի, Հայոց թագավոր և վրաց Շահնշահ Գագիկի օրոք կամեցա տալ Գրիգոր Պահլավունու որդի Ապլղարիբին հայոց կաթողիկոսի կողմից ինձ տրված Աշնակ այգին ... Արդ տվեցինք որմերով, պտղատու և անպտուղ ծառերով, խոթիարկներով և հարկից ազատ երկու օրվա ջրով և գյուղից ստացվող ամենայն հասույթով...»***: Հաջորդ անգամ Աշնակը հիշատակվում է Անիի վիմական արձանագրություններում, 1066 թվականին,երբ այն նորից վաճառվել է Անիի մեծահարուստներին («Կրկին Աշնակը գնեցի, իմ խոտհարկը 100 բարդ խոտի դեզ էր»): Հետագա դարերում Աշնակը ևս արժանանում է

Թալինի մյուս գյուղերի բախտին, բազմիցս ավերվում է օտար նվաճողներից: Ներկայումս Աշնակի շրջակայքում կան բազմաթիվ հուշարձաններ:

ԱՄՐՈՑՆԵՐԸ. - Աշնակի շրջակայքում հայտնի են չորս ամրոցներ, որոնք հաստատում են նրա արքունական ձմեռոց - զորակայան լինելու փաստը:

«ԱՇՆԱԿ I».- Ամրոցը գյուղի կենտրոնական մասում է ,և նրա տարածքի մեծ մասը ներկայումս խաթարված է մեր օրերի բնակելի տներով: Ամրոցը կառուցվել է հարթ տեղանքի վրա և հիմնականում ապավինել է արհեստական պաշտպանական կառույցներին: Ամրոցից պահպանվել են արևելյան կողմի պարիսպների հիմնապատերը: Դրանք կառուցված են բազալտե խոշոր քարերի կանոնավոր շարվածքով, որի արանքները և հիմքերը լցված են կրաշաղախով: Պարիսպները պահպանված են 1,2 մետր բարձրությամբ: Ամրոցի ներսում երևում են կրաշաղախե միջուկով պատեր ունեցող շինության հետքեր, առանձին ընկած սրբատաշ տուֆ քարեր: Թվագրվում է մեր թվարկության առաջին դարերով:

«ԱՇՆԱԿ II». - Գյուղից 3 կմ հարավ-արևելք է, երկու խոր ձորերի միացումից առաջացած նեղ ու երկար հրվանդանի վրա, Արարատյան դաշտի նախալեռնային գոտու սահմանագծում: Ամրոցից պահպանված են կոպտատաշ տուֆով շարված պարիսպները, որոնք ունեն որմնահեցեր և հիմքում քառակուսի աշտարակներ /նկ. 25/: Ներսում նշմարվում են պարիսպների պարագծով

Նկ. 25 Հատված «Աշնակ» ամրոցի պարիսպից

կառուցված և ուղղանկյուն հատակագծով բնակարանների հետքեր: Մուտքը հարավային կողմում է, որտեղ ճանապարհի մի մասը փաստորեն դեպի ձորը իջնող ապահով գետուղի է: Ամրոցի շրջակայքում կան հնադարյան բնակելի քարայրներ և դամբարաններ: Վերգետնյա գտածոներով ամրոցը թվագրվում է մ.թ. III-V դարերով:

«ԱՇՆԱԿ III ». - Ամրոցը գյուղի արևելյան կազմում ձգվող խոր ձորի ձախ ափին է: Այն ունի մոտ 0,5հա տարածք և քառակուսի հատակագիծ: Պահպանված են պարիսպների կոպտատաշ քարերով շարված հիմնապատները, ինչպես նաև ներսի մեծ չափերի շինությունների ավերակները: Ամրոցը թվագրվում է վաղ միջնադարով:

«ԱՇՆԱԿ IV» . - Գյուղից 1 կմ հյուսիս է, երկու ձորերի միացումից առաջացած հրվանդանի վրա: Ամրոցի պարիսպները և բնակարանների պատերը կառուցված են կոպտատաշ տուֆից և պահպանված են մինչև 1 մետր բարձրությամբ: Այս ամրոցը ևս թվագրվում է վաղ միջնադարով:

Չորս ամրոցների առկայությունը վկայում է, որ մինչև XI դ. Աշնակը եղել է վարչական ու տնտեսական կարևոր կենտրոն, և մեծապես հոգ է տարվել նրա պաշտպանության համար:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ. - Եկեղեցի-դղյակը գյուղից հարավ-արևելյան մասում է, խորընկա ձորի աջ եզրին: Եկեղեցի-դղյակի շրջակայքը ուսումնասիրվել է դեռևս XX դարի սկզբին, պեղել է Ռուսական կայսերական հնագիտական ընկերության աշխատակից Դումբերգը: Պեղումներից հայտնաբերված հնագիտական գտածոները ներկայումս պահվում են Էրմիտաժի արևելագիտական բաժնում: Հուշարձանը ունի շատ հետաքրքիր կառուցվածք և անցել է շինարարական երեք շրջան: Առաջին շրջանը ընդգրկում է X-XI դարը, երբ կառուցվել է միախորան, թաղածածկ մատուռ: Սրբատաշ կարմիր տուֆով շարված մատուռը հետագայում առնվել է բազալտե քարերով կրկնապատի մեջ: Շինարարական վերջին շրջանում կառույցը հզորացվել է բազալտե տաշված քարերից կազմված հզոր պատով, որով մատուռը վերածվել է երկհարկանի դղյակի: Դեռևս պահպանվել է երկրորդ հար-

կի պատերի մի մասը. դրանք ունեն ուղղանկյուն աշտարակների տեսք /նկ. 26/: Եկեղեցի-դղյակի շարվածքը նման է Ամբերդի հուշարձանների վերակառուցումների շարվածքին, ուստի և հնարավոր է այն ևս թվագրել նույն դարաշրջանով:

Եկեղեցի համարվող մյուս կառույցը միջնադարյան մի շինություն է գյուղի հարավ-արևմտյան մասում, այսօրվա գերեզմանոցի տարածքում: Կառուցված է բազալտե հարթության վրա: Դրանից պահպանված է միայն երկու մետր բարձրությամբ պատի կրաշաղախե միջուկը՝ երեսապատման առանձին քարերով: Պատի վերևին շերտում երևում է գերանի տեղադրման անցք, որով հնարավոր է դառնում դատել հուշարձանի մասին որպես քաղաքացիական կառույցի, չնայած բացառված չէ, որ այն նաև եկեղեցի է (այսօրվա թաղումները անհնար են դարձրել այդ հարցը պեղումներով լուծել):

ԳՅՈՒՂԱՏԵՂԻՆ.- Վերոհիշյալ գերեզմանոցի տարածքում եղել են բազմաթիվ բնակարանային համալիրներ, որոնցից մնացել են միայն պատեր, շարված տարբեր մեծության բազալտե քարերով: Վերգետնյա նյութերով գյուղատեղին

Նկ. 26 Աշնակի դղյակ - եկեղեցու ընդհանուր տեսքը

թվագրվում է զարգացած միջնադարով: Հարկ է նշել, որ այսօրվա թաղումների հետևանքով այս հուշարձանը ևս ոչնչացման եզրին է:

ՀՆՁԱՆՆԵՐԸ.- Սկսած Աշնակի հյուսիսային կողմից՝ 3-4կմ դեպի հարավ, ձգվում են քարե հին ցանկապատերով բաժանված հողակտորներ, որոնց եզրերին մոտ պահպանվել են հարյուրավոր հնձանների ավերակներ: Դրանց մեծամասնությունն ունի քառանկյուն հատակագիծ: Պատերն ունեն տարբեր չափերի բազալտե քարերով շարվածք, որի արանքները լցված են հողի և մանր քարերի շաղախով: Պեղված հնձաններից մեկի ներսում կրաշաղախով սվաղված մի հարթակ կա, որի վրա տրորվել է բերքը: Քաղցուն հարթակից հոսել է հողի մեջ թաղված խոշոր կարասների մեջ: Հնձանի մյուս բաժանմունքում շարված մի շարք կարասներում պահեստավորվել է զուլալված գինին: Ինչպես հայտնի է, միջնադարյան Հայաստանի առևտրում գինին հանդիսացել է վաճառվող կամ փոխանակվող հիմնական արտադրանքներից մեկը: Աշնակի հնձանների, ինչպես նաև քարե ցանկապատերով հողամասերի մանրակրկիտ ուսումնասիրությունը հնարավորություն կընձեռի ավելի խոր ըմբռնելու Հայաստանի տվյալ դարաշրջանի հողատիրական հարաբերությունները:

ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԸ.- Գյուղի շրջակայքում կան մանր քարազրահով ծածկված մ.թ.ա. II-I հազարամյակներին պատկանող դամբարանաբլուրների առանձին խմբեր:

ԱՆՏԻԿ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԵՐԸ.- Աշնակի անտիկ դամբարանադաշտում պատահականորեն գտնված իրերը մեծ նշանակություն ունեն Հայաստանի մ.թ. առաջին դարերի արվեստի ուսումնասիրության համար: 1909 թվականին ջրանցք անցկացնելու ժամանակ պատահականորեն բացվել են երեք դամբարան, որոնցում գտնված հնագիտական իրերը ցուցադրվում են Էրմիտաժի արևելքի բաժնում: Դրանք ոսկյա զարդեր են, հռոմեական կայսրերի օրոք կտրված արծաթյա դրամներ, կավից, ապակուց պատրաստված անոթներ, որոնցից ապակյա սրվակը ունի օձագլուխ կանթեր: Այս նյութերը ոչ միայն ունեն գեղարվեստական ու

հնագիտական մեծ արժեք, այլև հաստատում են այն փաստը, որ պատմիչները Աշնակը անվանել են արքունի ձմեռոց:

ՀՈՌՈՄԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԸ.- Գյուղից 1կմ հարավ-արևմուտք է: Թաղումները կատարված են ցածրադիր բլուրների վրա: Դամբարանները փոքր սալարկղներ են, որոնցից առանձին գերեզմաններ շրջափակված են բազալտե քարերով:

ԽԱՉՔԱՐԵՐԸ.- Աշնակ գյուղի հայտնի խաչքարերը և դրանց բեկորները պատկանում են զարգացած միջնադարին: Հոռոմի գերեզմանոցի մոտ գտնվել են մի քանի ջարդված խաչքարեր, որոնց մեջ աչքի է ընկնում կարմիր տուֆից կերտվածը, որի մեջտեղում փորված է ոճավորված խաչի պատկեր՝ ներքևում օձաձև զարդերով: Խաչքարի եզրերը պատված են գալարահյուս, իրար միահյուսված զարդաքանդակներով, իսկ թևերը ձևավորված են կենաց ծառի և խաղողի ողկույզների քանդակներով:

Մի փոքր խաչքարի վրա պահպանված է «Սուրբ Խաչս Գրիգոր կանգնեցրեց» արձանագրությունը:

Շ Ղ Ա Ր Շ Ի Կ

Շղարշիկ բարձրադիր լեռնային գյուղը Կաթնաղբյուրից 5կմ հյուսիս է: Տարածվում է տափարակի վրա, որի թիկունքում գտնվող բլրի գագաթին կա մի ամրություն, որ կոչվում է «Ղալաչա»: Սա, որ փոքր ամրոց է, քառանկյուն հատակագծով փոքր չափերի շինություն է: Հարավային կողմի մուտքի մոտ ընկած է նրա քարե դուռը: Ամրոցը կառուցված է կոպտատաշ տուֆով, կրաշաղախով: Պատերի պահպանված բարձրությունը 1,5-ից 2 մետր է: Այն, հավանաբար, ունեցել է պահակային նշանակություն և թվագրվում է վաղ միջնադարով:

ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԸ.- Գյուղից 1,5 կմ հարավ տարածվում է բրոնզեդարյան դամբարանադաշտը, որտեղ իշխող դիրք են գրավում երկու տասնյակի հասնող խոշոր դամբարանաբլուրները:

Գյուղի արևմտյան եզրին վառ կարմիր տուֆից կառուցված է երկրորդ աշխահամարտում զոհված շղարշիկցիների հուշահամալիրը: Հուշարձանի մի մասը նվիրված է Մեծ եղեռնի զոհերին:

Ե Ղ Ն Ի Կ

Եղնիկ գյուղն ընկած է Շղարշիկից 2կմ դեպի արևմուտք: Նրա կենտրոնում կա XIX դարում կառուցված եռանավ բազիլիկ եկեղեցի: Այն ունի փայտե ծածկ, որը թաղակերպ հենված է փայտե սյուների վրա: Պատերը կառուցված են սև և կարմիր տուֆի զուգորդությամբ: Դրանց մեջ օգտագործված են նաև շրջակայքից բերված, հնագույն երբեմնի շինություններին պատկանող քարեր: Ներսում՝ բեմի առջևի, ինչպես նաև եզրային պատերը զարդանախշված են որմնանկարներով: Դրանցում պատկերված են քրիստոնեական սրբեր և կենաց ծառեր, որոնք հավանաբար կատարել է Թալինի XIX դարի եկեղեցին դրվագող նկարիչը: Խորանի մեջ դրված խաչքարը թեև արձանագիր է, սակայն զարդաձևերով թվագրվում է IX-X դարերով:

ՍԲ. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ.- Կանգնած է գյուղից 2կմ հյուսիս, սառնորակ աղբյուրների ակունքում: Եկեղեցին փոքր չափերի միանավ շինություն է՝ կառուցված հավանաբար XVII դարում: Պատերը սրբատաշ դեղնավուն տուֆից են, տանիքը երկթեք է: Խորանի առջև կան XII-XIII դարերին բնորոշ զարդաքանդակներով խաչքարերի բեկորներ: Եկեղեցու մոտ պահպանվել է ուշ միջնադարյան գերեզմանոց, որի տապանաքարերից մեկի վրա կա «Կեսսիմ ծառա Քրիստոսի» արձանագրությունը: Եկեղեցին, հավանաբար, ինչ-որ չափով առնչվել է նաև ջրի պաշտամունքի հետ: Մինչև հիմա էլ շրջակա գյուղի բնակիչները Վարդավառի գեղեցիկ տոնակատարությունը անցկացնում են այստեղ: Այդ նույն վայրում սփռված են միջնադարյան ընդարձակ գյուղատեղիի ավերակներ, ուր մնում են մեծ թվով առանձին կանգնած բնակարանային համալիրների պատեր՝ կառուցված կոպտատաշ տուֆից: Գյուղատեղիում պահպանված է նաև մի ծակ քար /Պորտաքար/, որի միջով անցնելով, չբեր կանայք, ըստ ավանդության, բուժվում էին:

Գյուղի եկեղեցուց քիչ հեռու պահպանվել են միջնադարի հասութաբեր ձեռնարկություններից մեկը՝ ձիթհանի ավերակները և դրա ճզմող քարը:

Գյուղի կենտրոնում համագյուղացիների ուժերով կառուցված է զոհված եղնիկցիների հիշատակին նվիրված աղբյուր-հուշարձան: Երկրորդ հուշարձանը, որը գյուղի հարավային մասում է, նույնպես նվիրված է համաշխարհային պատերազմում զոհվածների հիշատակին: Հուշարձանը կառուցված է սպիտակ ֆելզիտից և ունի հետաքրքիր գեղարվեստական լուծումներ:

ԴԱՇՏԱԴԵՄ

Գյուղը շրջկենտրոնից 5կմ հարավ է: Թալինի սարավանդի եզրին և իշխող դիրք ունի Արարատյան դաշտավայրի արևմտյան եզերքում: Նրա հարավային մասում է ամրոցային համալիրը, որն ունեցել է շինարարական երեք շրջան: Միջնադարյան դղյակը, ի տարբերություն հայկական լեռնաշխարհի մնացած դղյակների, զուրկ է եղել բնական պաշտպանությունից և ապավինել է իրեն շրջափակող հզոր պարիսպներին /նկ. 27/:

Միջնաբերդի հիմքերը դրված են կոպտատաշ և խոշոր քարասալերի վրա, որը հիմք է տվել Թորամանյանին այն համարելու ուրարտական կառույց: Ամրոցի շրջագծից



Նկ. 27 Դաշտադեմի ամրոցը

դուրս, նրա արևմտյան կողմում, բլրի լանջերին կիկլոպյան տիպի շարվածքով պարիսպների հետքեր են նկատվում: Միջնաբերդից պահպանվել են միայն առաջին հարկի մեծ դահլիճը և վերևի հարկերի առանձին պատեր: Ամրոցի հնագույն շինությունը դահլիճն է, որն ունի քառակուսի ձև: Այն կառուցված է միաչափ մեծության սրբատաշ կարմիր տուֆ քարերից որակյալ կրաշաղախով: Քառանկյուն աշտարակին հետագայում կցվել են կիսաշրջանաձև բուրգեր, որոնք կառուցվել են XII դարում Շադադյան Սուլթան իբն Շավուրիի օրոք: Այդ բուրգերը կառուցված են մանր և ոչ լրիվ տաշված քարերով: Միջնաբերդից դուրս, նրա շրջագծով կառուցված են կիսաշրջան աշտարակներով պարիսպներ, որոնք ունեցել են մոտ 10 մետր բարձրություն: Դրանք ևս սրբատաշ կարմիր տուֆից են: Կառուցումը /ավելի շուտ՝ վերականգնումը/ ուղղորդվում է Զաքարյան իշխաններին: Պարիսպների քարերի վրա պահպանված են վարպետների դրած նշաններ, իսկ հյուսիսային աշտարակի վրա՝ «Քարգործ Հովհաննեսին հիշեցեք ի ԲՐԻՍՏՈՍ» արձանագրությունը: Այն գլխիվայր գրված տառերով կրկնված է քիչ հեռու: Միջնաբերդի պարիսպների կամարակապ մուտքը հարավային կազմում է, որից երևում է միայն կամարը, մնացածը ամբողջությամբ թաղված է հողի մեջ: Հյուսիսային պարիսպի ներսից կիպ է միանավ, թաղածածկ եկեղեցին, որը խիստ ավերված վիճակում է: Եկեղեցու և միջնաբերդի միջև գտնվում է ստորգետնյա խոշոր ջրավազանը, որն անցյալում սխալմամբ դիտվել է որպես գետնուղի: Մեծ տարողությամբ ստորգետնյա այս ջրավազանը փորված է ժայռի մեջ, պատերը սվաղված են անջրաթափանց կրաշաղախով: Պատի մեջ երևում է ջրավազանը սնող կավե խողովակի եզրը: Ջրավազանը ծածկված է երեք հսկայական տուֆասալերով:

Միջնաբերդի արևելյան մասում եղել են նաև սբ. Սարգիս եկեղեցու հիմնապատերը, որոնք անհետացել են:

Բացի միջնադարյան կառույցներից, պահպանված են 1812 թվականին պարսիկների կառուցած կոպտատաշ տուֆից և հողե լիցքով պարսպապատերը: Դրանք ամբողջ պարագծով ունեն քառանկյուն հատակագծով մթերանոց-աշտարակներ: Միջնաբերդի արևմտյան մասում գտնվում է վերջին խանի կարմիր տուֆով կառուցված, թաղակապ լու-

սամուտներով միահարկ տունը:

ՔՐԻՍՏԱՓՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ.- Գյուղից 2,5կմ հարավ է: Սրբատաշ գորշ տուֆից է, ներսից խաչաձև, արտաքինից ներկալված ուղղանկյան մեջ և թվագրվում է VII դարով: Քառակուսի հիմքից անցումը ութանիստ գմբեթին իրականացված է առագաստների միջոցով: Միակ՝ արևմտյան մուտքը շրջակալված է քանդակազարդ զույգ որմնասյուներով: Պատերին կան X-XV դդ. նվիրատվական արձանագրություններ: Ս.Քրիստափորը ամբողջությամբ վերականգնվել է 1980թ.: Այն շրջապատված է կոպտատաշ բազալտե պարսպով, ավելացվել են խցեր: Եկեղեցուց քիչ հյուսիս պահպանված է սև տուֆից կառուցված քառակուսի հատակագծով աշտարակաձև մի կառույց, որը պայմանականորեն համարվում է զանգակատուն:

ԳԵՐԵԶՄԱՆՈՑՆԵՐԸ.- Ս.Քրիստափոր եկեղեցու շրջակայքում տարածված է գերեզմանոց, ուր թաղումներ կատարվում են նաև ներկայումս: Գերեզմանոցի խաչքարերը և արձանագիր տապանաքարերը թվագրվում են VIII-XVII դարերով: Եկեղեցու մոտ, այսօրվա գերեզմանոցում, իբրև տապանաքար, դրված է նաև Արագածից բերված մեկ վիշապկոթող:

Խաչքարեր և ուշ միջնադարյան տապանաքարեր կան նաև ամրոցի ու եկեղեցու միջև ընկած տարածքում:

Հետաքրքրություն են ներկայացնում այգիների մենավոր խաչքարերը, որոնցից կլոր սյատկերներով և արմավի տերևներով քանդակազարդ, արձանագիր խաչքարը համարվում է Հայաստանի հնագույն կոթողներից մեկը /882թ./: Մյուս խաչքարը գյուղի արևելյան մասով անցնող ձորակի եզրին է /IX դար/: Այն բրգաձև գագաթով է, կարմրավուն տուֆից: Նրա վերևի հատվածում քանդակված է խաչ, որի հիմքի տակ փորված է փոքր խորշ: Խորշի տակից դեպի խաչաթևերը բարձրանում են օձաձև ոճավորում ունեցող բուսազարդեր: Խաչքարը պատվանդան չունի, թաղված է հողի մեջ:

ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԸ.- Գյուղի հյուսիսային կողմում կան բրոնզեդարյան դամբարանաբլուրներ: Գյուղի տարածքում հայտնաբերված ցուլի բրոնզե արձանիկը հնագիտական ուշագրավ գտածոներից է:

ՀՆՁԱՆՆԵՐԸ. - Ամրոցի պարիսպներից սկսած 4-5 կմ շերտով ընկած են քարե ցանկապատերով իրարից անջատված հողակտորներ, որոնց եզրերի մոտ կան երբեմնի մեկ կամ երկհարկանի հնձանների ավերակներ: Հնձանները մեծամասամբ կառուցված են բազալտե խոշոր որձաքարերից. պատերի միջուկը, իբրև կապակցող խառնուրդ, հող է և մանր քարեր: Պեղված հնձաններից մեկում բացվել են կրաշաղախե հարթակ՝ խաղողը տրորելու համար, ինչպես նաև գետնի մեջ թաղված մի քանի կարասներ /XII-XIV դդ/: Հնձանների առատությունը վկայում է Դաշտադեմի տարածքում զարգացած այգեգործության, առանձնապես՝ խաղողագործության մասին, որի վերաբերյալ մեզ հասել են վիմական բազմաթիվ արձանագրություններ:

Դաշտադեմից 3կմ հարավ-արևմուտք պահպանվել են ուշ միջնադարյան մի գյուղատեղիի ավերակներ, մի ուրիշն էլ՝ նրանից 2կմ հարավ-արևելք:

Ա Կ ՈՒ Ն Ք

Ակունք գյուղը բլուրներով շրջապատված փոքր գոգավորության վրա է, շրջկենտրոնից 5կմ հյուսիս-արևմուտք: Գյուղի հյուսիս-արևելյան մասում «Թուխ Մանուկ» կոչվող մատուռի /XII-XIII դդ/ ավերակներն են /նկ. 28/: Պահպանված են նրա խորանի ամբողջական կամարը և 170սմ բարձրու-

Նկ. 28 Ակունքի «Թուխ մանուկ» մատուռը ընդհանուր տեսքը

թյամբ պատերը՝ շարված կիսատաշ կարմիր և սև տուֆով: Մատուռի մեջ դրված է լուսապսակով սրբի բարձրաքանդակի մի բեկոր: Այն թևերը երկու կողմ տարածած կնոջ պատկեր է, բնորոշ վաղ միջնադարյան ժամանակաշրջանին: Կան նաև զարդաքանդակներով հարուստ XII-XIII դդ. թվագրված խաչքարերի բեկորներ:

Ս.ՍԱՐԳԻՍ ՈՒԽՏԱՏԵՂԻՆ.- Եղել է մատուռ գյուղի թիկնամասի բլուրի գագաթին և ոչնչացվել է մեր օրերում՝ ջրագծի կառուցման հետևանքով: Երբեմնի մատուռի հարևանությամբ կան վարդագույն տուֆից քառակող կոթողներ, որոնցից մեկի վրա քանդակված է սկիհ /IV-VII դ./: Նույն բլուրի լանջին տարածված է այսօրվա գերեզմանոցը, որտեղ առկա են նաև միջնադարյան տապանաքարեր:

ԱՄՐՈՑԸ. - Գյուղից 2կմ հյուսիս-արևելք, սեղանաձև բլուրի գագաթին կանգնած են «Բերդի կող» կոչվող ամրոցի ավերակները: 3-4 հեկտարի հասնող տարածքը չորս կողմից շրջափակված է կանոնավոր չոր շարվածքի պարիսպներով: Հյուսիսային մասում պարիսպները կրկնաշարք են: Ամրոցի հարավային մուտքը նկատելի է: Ներսում նշմարվում են 2մ լայնությամբ ուղղանկյուն հատակագծով համալիրների հետքեր: Գագաթային մասում առանձնանում է մի փոքր բարձրություն, որի վրայի ավերակների տակ, հավանաբար, պաշտամունքային կառույց է: Բնակելիներ կան նաև պարիսպից դուրս: Ամրոցը բազմաշերտ է. ստորին շերտը վերաբերում է բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջաններին, վերևի շերտը՝ անտիկ դարերին: Այս ժամանակներին են պատկանում նաև բլրալանջի բազմաթիվ դամբարանները:

Գյուղից 3կմ հյուսիս, Լուսաղբյուր հանդամասում միջնադարյան «Մալաքլու» կոչվող գյուղատեղիի ավերակներն են:

Ս.ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ/1857 թ./. - Գյուղի կենտրոնում է, բարձր հարթության վրա: Այն թաղակապ, փայտե ծածկով, եռանավ բազիլիկատիպ եկեղեցի է՝ կառուցված կարմիր և սև տուֆից: Նրա հարավային մուտքի բարավորի վրա փորագրված է գեղեցիկ խաչաքանդակ՝ զարդարված խաղողի ողկույզներով և ծիթենու տերևներով: Արևմտյան մուտքի մոտ դրված են սև տուֆից սյունանման կոթողներ:

Եկեղեցուց քիչ հեռու 1901 թվականին հիմնված Պողոս Ազարովի տունն է: Այն միահարկ, կամարակապ լուսամուտներով, վառ-կարմիր (ճակատներում սրբատաշ) տուֆից կառուցված քաղաքային տիպի շինություն է:

Կ Ա Ր Մ Ր Ա Շ Ե Ն

Շրջկենտրոնից 1կմ հյուսիս, Արագածի բարձրադիր լանջերին է փռված Կարմրաշեն գյուղը, որի շրջակայքում կան մի շարք հուշարձաններ:

ԳԵՐԵԶՄԱՆՈՑԸ.- Գյուղի կենտրոնում, ուր նկատվում են բազիլիկ եկեղեցու հիմնապատերը, տարածված է երբեմնի գերեզմանոցը: Այստեղ տապանաքարերի փոխարեն օգտագործվել են այդ եկեղեցու քարերն ու ճարտարապետական դետալները: Կան նաև XII-XIIIդդ խաչքարեր ու հասարակ տապանաքարեր: Հարավային կազմի կամ ձորակի եզրին կանգնած հին տներից մեկում մնում են IV-VII դդ քառակող կոթողներ և կոթողի մի պատվանդան:

Խաչքարեր կան նաև գյուղի արևմտյան մասի այսօրվա գերեզմանատանը:

«ՃԳՆԱՎՈՐ» ՀՈՒՇԱՐՁԱՆԱԽՈՒՄԲԸ. - Սա գյուղից 1 կմ հարավ է, խոր ձորի մեջ: Ձորի աջ ափի վրա կախված ժայռերի մեջ փորված են խցեր՝ առջևի իրենց հարթակով /նկ. 29/: Այստեղ բարձրանալու համար ժայռի մեջ փորված են հատուկ աստիճաններ: Խցերի առջև, ժայռաբեկորի վրա կանգնած են երեք խաչքարեր, որոնցից մեկը, որը զարդարված է խաղողի ողկույզներով և բուսազարդերով, նվիրված է 1124 թ. մահացած ոմն Հովհաննեսի:

Ձորի խորքում, ժայռերի մեջ փորված են երեք բաժանմունքով ջրաղացներ, որոնցից մեկը աշխատեցնելու համար, ժայռի մեջ բացված է 20 մ երկարությամբ թունել:

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՅՈՒՂԱՏԵՂԻՆ. - Գյուղի արևելյան մասի ձորակի աջ եզրին տարածված են միջնադարյան գյուղա-

Նկ. 29 Կարմրաշենի «ճգնավոր» հուշարձանախումբը

տեղիի ավերակները: Մյուս գյուղատեղին «ճգնավոր» հուշարձանի դիմաց է, ձորի աջ ափին:

ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏՐԸ. - Գյուղի շրջակայքում,նաև հիդրոկայանի մոտ կան տարբեր մեծության դամբարանաբլուրներ:

Ո Ս Կ Ե Թ Ա Ս

Ոսկեթաս գյուղը Կարմրաշենից 2 կմ արևմուտք է: Նրա շրջակայքում կան բազմաթիվ բնավ չուսումնասիրված բրոնզեդարյան դամբարաններ:

Ա Ր Ե Գ

Շրջկենտրոնից 4 կմ արևմուտք է: Գյուղի հարավային մասում վեր է խոյանում նշանավոր Արտին լեռը, որը հայտնի է իբրև նախնադարյան մարդկանց բնակատեղի-կացարան: Լեռան անունը Արտիունա ձևով հիշատակվում է Կարմիր բլուրում գտնված կավե սալիկների վրա: Լեռան գագաթին մնում են կոպտատաշ տուֆից կառուցված ամրոցի ավերակները: Անանիա Շիրակացին Արտին լեռը հիշատակում է որպես Կամսարական նախարարների որսատեղի: Արեգից մոտ 1 կմ արևելք, բարձրացող բլուրներից երկուսի գագաթին

պահպանվել են մ.թ.ա. երկրորդ-առաջին հազարամյակներով թվագրվող, կիկլոպյան շարվածք ունեցող երկու ամրոցների ավերակները, իսկ բլուրներից մեկի ստորոտին տարածված է անտիկ դարաշրջանի մի գյուղատեղի, որի շրջակայքում կան նաև դամբարաններ: Այստեղից 2 կմ արևմուտք ընկած է մյուս գյուղատեղին, որ ուշ միջնադարյան է:

Բ Ա Ր Ո Ժ

Բարոժ գյուղը Արեգից 2 կմ հարավ է, Արտին լեռան փեշին: Գյուղի շրջակայքը հարուստ է պալեոլիթյան բնակատեղիներով և օբսիդիանից գործիքների պատրաստման արհեստանոցներով:

Հ Ա Կ Կ Ո

Ամրտին լեռան հարավարևմտյան փեշին ընկած է Հակկո գյուղը: Սրա դպրոցի շինարարության ժամանակ պատահականորեն բացվել են ուրարտական դամբարաններ, որոնցից մեկում գտնվել են երկու կնիքներ:

Ա Ր Ա Գ Ա Ծ

Ամվանից 2 կմ արևմուտք, Ախուրյան կիրճի ձախ պռնկին կանգնած է Արագածի վեցխորան կարմիր տուֆից կառուցված եկեղեցին: Ճարտարապետական և կառուցողական առանձնահատկություններով սա թվագրվում է VI դարով: Գմբեթի պատուհաններից մեկի պսակի արձանագրությունը հաղորդում է ճարտարապետի անունը՝ Գրիգոր: Սույն եկեղեցին կարևոր տեղ է գրավում հայ ճարտարապետության մեջ, իբրև բազմախորան եկեղեցիների /Իրինդ, Եղվարդ/ նախատիպ:

Հ Ա Ց Ա Շ Ե Ն

Շրջկենտրոնից 8 կմ արևմուտք ընկնող Հացաշեն գյուղից կես կիլոմետր հյուսիս, բլրի վրա, տարածված են գյուղատեղիի ավերակներ, ուր այժմ ուխտատեղի է: Այստեղ հա-

վաքված են XI-XII դդ. զարդաքանդակ խաչքարերի բեկորներ: Գյուղի շրջակայքի քարանձավներում հայտնաբերված են նախնադարյան մարդու կացարաններ, թեև դրանք ըստ էության չեն ուսումնասիրվել:

Ց Ա Մ Ա Ք Ա Ս Ա Ր

Գյուղը Թալինից 10 կմ արևմուտք է: Բնակավայրից 1,5 կմ արևելք, ասֆալտապատ ճանապարհի աջ կողմում գտնվել են վաղ բրոնզի դարի վերջին փուլին վերաբերվող բնակատեղիի ավերակները: Մեկ այլ գյուղատեղի կա տարածքից 2 կմ հյուսիս-արևելք ընկած բլուրների լանջին: Դա միջնադարյան է:

Ս Ո Ւ Մ Ե Ր

Սուսեր գյուղը, որն ընկած է Ցամաքասարից 3 կմ արևմուտք, հայտնի է «Թուխ Մանուկ» կոչվող ուխտատեղիով: Այն մտնում է այսօրվա գերեզմանոցի տարածքը: Այստեղ հավաքված են XII-XIV դդ. խաչքարերի բեկորներ: Բնակավայրի շրջակայքում նկատվում են չուսումնասիրված դամբարանաբլուրներ:

Զ Ա Ր Ի Ն Զ Ա

Բլուրներով շրջապատված հարթության վրա, շրջկենտրոնից 13 կմ հյուսիս-արևմուտք, Ցամաքասարից Մարալիկ տանող ճանապարհի ձախ եզրին փռված է Զարինջա գյուղը, որի հյուսիսային մասում, ցածրիկ բլրի վրա, այսօրվա գերեզմանոցի մոտ կանգնած է VII դարում կառուցված ս. Խաչ եկեղեցին /նկ. 30/:

Այն խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ կառույց է: Ներսից խորանները շրջանաձև են, իսկ արտաքինից՝ հնգանիստ կողերով: Ուղղանկյուն հատակագծով ավանդատունը եկեղեցու շրջագծից դուրս է: Եկեղեցու թմբուկը արտաքուստ ձևավորված է ոլորուն որմնասյուներով և պայտաձև կամարներով: Թմբուկը եզերված է ականթի տերևներով քանդակազարդ քիվով: Գմբեթը վեղարաձև է: Եկեղեցին ունի երկու մուտք, որոնցից հյուսիսայինը ներկայումս փակված է: Հարավային մուտքի բարավորի վրա քանդակված է բուսազարդերով խաչ, որի երկու կողմերում դեմ-դիմաց կանգնած են մի զույգ աղավնի: Եկեղեցին կառուցված է կարմիր, սև, դեղնավուն տուֆ քարերից: Երեսակալ քարերի վրա կան հայկական տառանշաններ: Եկեղեցու ստորին և վերին շարքերի քարերի միջև խիստ տարբերություն կա, որը վկայում է X-XI դարերում Պահլավունիների կատարած հիմնավոր վերանորոգումների մասին / տախտ.1,գծ. 9/: Բեմի առջևի պատի մեջ շարված են տարբեր տիպի երեք խաչքարեր: Մեկը կլոր շրջագծով է, որի վրա քանդակված են խաղողի սլաքաձև ողկույզներ, նկատվում է արձանագրության մի հատված: Խաչքարերը, ըստ զարդաքանդակի, թվագրվում են VIII-IX դարերով: Եկեղեցուց 3-4 մետր հյուսիս կա ուղղանկյուն հատակագծով, սրբատաշ տուֆից ավերակ մի շինություն /մոտ 50 սմ լայնության պատով/, որը, հավանաբար, գերեզմանական կառույց է:



Նկ. 30 Զարինջայի ս. Խաչ եկեղեցին

ՄԱՍՏԱՐԱ

Մաստարան Հայաստանի հնագույն և նշանավոր գյուղերից է: Այն շրջկենտրոնից 8 կմ հյուսիս-արևմուտք է: Հիմնված է բարձր բլուրներով պատսպարված հարթության վրա, «Մաստարայի սելավ» կոչվող գետակի ափին: Գյուղը մասնագիտական աղբյուրներում և արձանագրություններում հիշվում է Մազդարա անունով:

Մաստարան մեծ հռչակ է ունեցել Գնթունիների օրոք, ապա ավերածությունների է ենթարկվել արաբական, թուրքական արշավանքների ժամանակ: Գյուղի տարածքում պահպանվում են տարբեր ժամանակաշրջանների մի շարք արժեքավոր հուշարձաններ:

Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻՆ. - Հայկական վաղ քրիստոնեական ճարտարապետության յուրատիպ և կատարյալ կառույցներից մեկը ս. Հովհաննես եկեղեցին է /տախտ.1, գծ. 2/: Այն խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ շինություն է, ներսից կիսաշրջան, իսկ դրսից եկեղեցու ընդհանուր շրջագծից դուրս ելնող բազմանիստ չորս խորաններով: Ծավալների այս կառուցվածքը շատ յուրահատուկ է Մաստարայի եկեղեցուն համանմանների շարքում /նկ. 31/ :



Նկ. 31 Մաստարայի Ս. Հովհաննես եկեղեցին

Խորանին կից կան երկու փոքրիկ ավանդատներ: Անցումը քառակուսուց բազմանիստ թմբուկի հիմքին, կատարված է մեծ տրոմպների միջոցով: Իր հերթին բազմանիստ թմբուկից անցումը կլոր գմբեթահիմքին իրականացված է ավելի փոքր տրոմպների միջոցով: Իսկ գմբեթը կոնաձև քարածածկ է, բնորոշ տվյալ ժամանակաշրջանի նմանապես հուշարձաններին: Եկեղեցին արևմտյան կողմից ունի շքամուտք և մուտք հարավային կողմից՝ դեպի խորան: Լուսամուտների քիվերը պատված են խաղողի և հյուսածո զարդերի քանդակներով: Եկեղեցին ունի նաև ատամնաշար քիվերի զարդարուն գոտի: Շինության ներքին միակ հարդարանքը երկու հավասարաթև, հնագույն խաչապատկերներն են՝ առնված շղթայաձև պսակների մեջ, արևելյան խորանի երկու կողմերում: Ներսում, արևմտյան պատին կից, կանգուն է XX դարի սկզբին դրված փայտե քանդակազարդ ռոտոնդան:

Եկեղեցու ճակատներին կան հայերեն մի շարք արձանագրություններ, որոնց մեծ մասը Գրիգորիասի և Դավիթ Գնթունու փորագրածն են: Դրանք թվագրված են VII դարի կեսով: Ստորին շարքերի քարերից մեկի վրա կա նաև հունարեն արձանագրություն: Մաստարայի եկեղեցու կառուցման ժամանակի վերաբերյալ եղել է տարակարծություն: Ավելի հավանական է համարվել VI դարը: Վերջերս կատարված մաքրման-պեղման աշխատանքների ժամանակ բացվել են եկեղեցուն կիպ կլոր աշտարակներ, կրապատ հորեր, գետնուղիներ, որոնք վկայում են, որ ուշ միջնադարում եկեղեցին հավանաբար վերածվել է դղյակի:

«ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ» ՈՒԽՏԱՏԵՂԻՆ. - Ս.Հովհաննես եկեղեցուց հարավ-արևմուտք է: Այն կառուցված է XVII-XVIII դարերում իբրև մատուռ: 1901 թվականի արձանագրության համաձայն այդ ժամանակ վերանորոգվել է նրա երկթեք քարածածկ տանիքը: Կողքին կա միջնադարյան մի դամբարանակառույց: Մեր հետազոտությունները ցույց են տվել, որ «Թուխ մանուկ» մատուռը կառուցված է IV-VII դարերում, քառակող սյունանման կոթողների վրա /նկ. 32/: Կոթողները կանգնեցված են դեմ-դիմաց և ունեն ինպոստային խոյակներ, նման Օշականի՝ Մորիկ կայսերը վերագրվող հուշարձանին: Խոյակների վրա քանդակված են ականթի տերևներ: Երկու կոթողն էլ առնված են պատի մեջ: Կա ևս մի մատուռ, որը գյուղի միջնադարյան գերեզմանոցի եզրին է: XII-XIII դարերով թվագրվող այս մատուռից պահպանվել են հարավային պատը և մեկ հատված խորանից:

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱ ՄԱՏՈՒՈԸ /XVII-XVIII դդ./. - Կանգնած է գյուղից արևմուտք, բարձր բլրի վրա, ամրոցի մեջ: Կառուցված է դեղնակարմրավուն տուֆից, ունի փոքր զանգակատուն:

ԿՈԹՈՂՆԵՐԸ, ԽԱՉՔԱՐԵՐԸ.- Գյուղի արևելյան մասում ընդարձակ մի տարածք գրավում է միջնադարյան գերեզմանոցը: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում գերեզմանոցի հարավային մասում կանգնած փոքր խոյակներով կոթողը, որի մի նիստին ամբողջ հասակով ներկայացված է Մարիամ Աստվածածինը՝ Քրիստոսը գրկին: Աստվածամոր այս պատկերումը ընդհանրապես հազվագյուտ երևույթ է: Կոթողի մյուս նիստին կենաց ծառի պատկեր է: Գերեզմանոցում կան նաև մի շարք խաչքարեր: Դրանց մի մասը ունի վարդակներով հարուստ զարդեր, որոնց հեղինակը Հերապետ Կազմողն է /նկ. 33/:

Մյուս խաչքարերին քանդակված են խաչազարդ ռոմբեր, իսկ խաչի հիմքի տակ՝ ուռուցիկ գնդեր, որոնք արել է Բաղիշ կազմողը: Խաչքարերը թվագրվում են XII-XIII դարերով: Մաստարայի խաչքարերից առանձնապես աչքի է ընկնում Խաչոտ վարդապետի ստեղծագործությունը, որ դրված է գյուղի արևելյան կողմի բարձր ժայռի գլխին:

ԱՄՐՈՑԸ.- Գյուղի հյուսիս-արևմտյան եզերքին է: Կառուցված է կոպտատաշ բազալտե քարերով: Հնագիտորեն բազմաշերտ այս հուշարձանը կանոնավորապես չի ուսումնասիրված:

Նկ. 32 Մաստարայի «Թուխ մանուկ» մատուռի խոյակով կոթողը

Նկ. 33 Մաստարա, խաչքարեր

ԳՅՈՒՂԱՏԵՂԻՆ.- Մաստարա-Թալին ճանապարհի ձախ կողմում, փոքր բլուրների վրա ընդարձակ տարածք է զբաղեցնում վաղ շրջանի մի գյուղատեղի՝ իր ավերակներով: Դրա շրջագծում կան նաև մ.թ.ա. III-I հազարամյակների դամբարաններ, որոնց առնչակից բնակավայրերի հետքերը իսպառ ոչնչացել են:

ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԵՐԸ.- Գյուղից հարավ, բլուրների ստորոտներին նկատվում են մեծ քանակությամբ դամբարանաթմբեր, որոնք թվագրվում են մ.թ.ա. II-I հազարամյակներով:

Զ Ո Ր Ա Գ Յ Ո Ւ Ղ

Զորագյուղը Մաստարայից 2 կմ հյուսիս է: Սրա տարածքը հայտնի է բրոնզեդարյան բազմաթիվ դամբարաններով, որոնց պեղումները հետաքրքիր նյութեր են պարունակում մ.թ.ա. II-I հազարամյակի մշակույթի լուսաբանման համար: Սակայն այնտեղ կյանքը շարունակվել է նաև վաղ միջնադարում:

Ծ Ա Ղ Կ Ա Ս Ա Ր

Ծաղկասարը փոքր գյուղ է, Մաստարայից 3,5 կմ հյուսիս-արևմուտք: Գյուղի թիկունքին բարձրացող բլրի լանջերին նկատելի են մի մեծ ամրոց-բնակատեղիի ավերակներ: Այստեղ կյանքն սկսվել է մ.թ.ա. III հազարամյակում և ընդհատումներով շարունակվել է մինչև միջնադար:

Գյուղի արևմտյան մասի մեծաքանակ դամբարանները դեռևս չեն հետազոտված: Իսկ նրա հարավային մասի միջնադարյան գյուղատեղիում նկատելի են հուշարձանների ավերակներ:

Շ Ե Ն Ի Կ

Շենիկ գյուղը Մաստարայից 5 կմ հյուսիս է, ձորերով առանձնացված փոքր տափարակի վրա: Նրան հարևան բլրի ստո-

ոտից բխող հորդաբուխ աղբյուրների տեղանքը հնուց ի վեր եղել է սրբատեղի: Աստ կան եկեղեցիներ: Ներկայումս գյուղը լքված է:

ԱՌԱՋԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ.- Տեղադրված է հյուսիս-արևելքից գյուղին հարող բլրի լանջին: Սա միանավ, թաղակապ ծածկով, կիսավեր բազիլիկ է, որը թվագրվում է V դարով /նկ. 34/:

Պեղումներից պարզվել է, որ այն ունի ուղղանկյուն հատակագիծ և երկու մուտք: Ջուրկ է ավանդատնից: Հյուսիսային պատը, ի տարբերություն մյուսների, շարված է փոքր չափերի տուֆաքարերով, ինչը , հավանաբար, հետագա վերանորոգումների արդյունք է: Եկեղեցին ունի եռաստիճան հիմնախարիսխ, իսկ նրա տանիքը եղել է կղմինդրածածկ, որը հաստատվում է պեղումներից հայտնաբերված կղմինդրի բազմաթիվ բեկորներով: Շենիկի եկեղեցու հայտնաբերված դետալները, նրա առանձին քարերի վրա փորագրված շրջանի մեջ ներգծված հավասարաթև խաչերը հավաստում են վերոհիշյալ թվագրությունը / սախտ.1,գծ. 6/:

Նկ. 34 Շենիկի V դ. եկեղեցու ներքին տեսքը

Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՆ.- Գյուղատեղիի հարավային մասում է: Սա խաչաձև հատակագծով, միախորան փոքր եկեղեցի է՝ կառուցված վարդագույն և սև տուֆով, ճակատները՝ սրբատաշ: 1901 թվականին VII դարի շարվածքից պահպանված է եղել միայն արևելյան մասը, խարխլված պատերը քանդել և վերանորոգել են: Նորոգված շինության մեջ հետաքրքրություն է ներկայացնում փայտե թաղակապ ծածկը /նկ. 35/:

ԳԵՐԵԶՄԱՆՈՑՆԵՐԸ.- Բազիլիկ եկեղեցու շրջակայքում տա-



Նկ. 35 Շենիկի Ս. Սարգիս եկեղեցին

ռածված է ընդարձակ մի գերեզմանատուն, որտեղ, իբրև տապանաքարեր, օգտագործվել են IV-VII դդ. քառակող կոթողներ:

Մյուս գերեզմանոցը գյուղի հյուսիսարևելյան կողմում է, որտեղ կան հողի ամեջ թաղված XII-XIII դարերի խաչքարեր և տապանաքարեր: Կան նաև սրբապատկերներով կոթողների կտորներ:

ՀԻՆ ԲՆԱԿԱՏԵՂԻՆ.- Ս. Սարգիս եկեղեցու շրջակայքում էրոզիայի ենթարկված հողաշերտի տակ բացվել են խոշոր տուֆաքարերով կանոնավոր շարված պատերի հատվածներ, որոնք հավանաբար պատկանում են ժամանակագրորեն ավելի հին և խոշոր չափեր ունեցող շինությունների:

Գ Ա Ռ Ն Հ Ո Վ Ի Տ

Գալինի շրջանի ամենաբարձրադիր գյուղը՝ Գառնհովիտը /Ադիաման/, շրջկենտրոնից 18 կմ հյուսիս-արևելք է՝ խոր ձորի ափին, ալպյան մարգագետիններով շրջափակված թեքադիր տափարակի վրա: Հուշարձաններն այստեղ եզակի նշանակության են:

Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ.- Գյուղի կենտրոնում է, և աչքի է ընկնում իր վեհությամբ և շքեղությամբ: Այն կենտրոնագմ-

Նկ. 36 Գառնհովիտի Ս. Գևորգ եկեղեցին



Նկ. 37 Գառնհովիտ, դեկորատիվ խորշեր, խաչերի պատվանդան սյուներով

բեթ է, ունի 19,55x15,70 մ չափերով ուղղանկյուն հատակագիծ / տախտ.1,գծ. 3/: Ունի քառանկյուն չորս ավանդատներ, երկու շքամուտք, որից արևմտյանը գլխավորն է: Մուտքերի աջ և ձախ կողմերը լրացված են կիսասյուներով: Եկեղեցու չորս թևերի մեջտեղում բարձրանում է շքեղ, ութանիստ գմբեթաթմբուկը, իր 12 լուսամուտներով և կոնաձև գմբեթով /նկ. 36/:

Նրա ճակատները ունեն երկուական խորշեր և քանդակազարդ կամարներով նեղ լուսամուտներ /նկ. 37/:

Արևմտյան պատի խորշերի մեջ արված են որմնասյուներ՝ արձաններ կամ թևավոր խաչեր կանգնեցնելու համար: Հյուսիսային և արևելյան պատերի խորշերի վերջավորությունները զարդարված են վազող ծիու և արև-սկավառակի փոքրածավալ քանդակապատկերներով: Քիվերը զարդարված են ականթի տերևներով: Եկեղեցու թմբուկը ևս ունի պատերը աշխուժացնող խորշեր, բացի կամարակապ լուսամուտներից: Կամարների վրա արված են թեփուկազարդեր և վզնոցապատկերներ: Եկեղեցու երեք կողմերի պատերը դրված են եռաստիճան հիմնախարիսխների վրա: Պատերին եղած արձանագրությունները հողմահարվել են և ընթեռնելի չեն: Լուսամուտի քիվերից մեկի զարդանախշերի մեջ կարդացվում է «Մովսես» անունը:

Եկեղեցու ներսը ամբողջությամբ սալահատակ է, իսկ բեմի առջև արված է կիսաշրջանաձև «դաս» կոչվող հարթակ: Այս եկեղեցին, որը ճարտարապետական առումով սերում է Ավանի տաճարից, ունի նաև յուրահատուկ տարրեր, որոնք նման են Մաստարայի և Թալինի հայտնի հուշարձանների առանձին դրվագներին: Ուստի հնարավոր է դառնում Ս. Գևորգ այս եկեղեցին թվագրել VI դարով:

Ս. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՏՈՒՈՑ.- Գյուղից 2 կմ հյուսիս է, երկու ձորերի միացման տեղում: Թաղակապ ծածկով այս մեծ մատուռը կառուցվել է 1892 թվականին, իր մեջ ներառնելով հին մատուռ-հուշարձանի ավերակները: Մատուռից վերև, ժայռի մեջ փորված են պաշտամունքային խորշեր: Ձորի մեջ նկատելի են միջնադարյան ջրաղացի ավերակների հետքերը:

ԱՄՐՈՑՆԵՐԸ.- «Գառնհովիտ առաջին ամրոցը» գյուղի եզրով անցնող հյուսիսից հարավ, խոր ձորի ափին է: Այն ունի մոտ 1 հա տարածք: Հիմնադրվել է մ.թ.ա. II-I հազարամյակում: Պահպանվել են կոպտատաշ քարից կառուցված քառանկյուն աշտարակներով և որմնահեցերով, մինչև 2 մետր բարձրության պարսպապատերը: Իր առաջին կործանումից հետո այն նորից վերապրել է մեր թվարկության առաջին դարերում: Այդ են վկայում հայտնաբերված վերգետնյա նյութը և պարսպապատերի հետագա վերանորոգված հատվածները: Ամրոց-բնակավայրի տարածքը ներկայումս ամբողջովին հերկվում է:

ԳԱՌՆՀՈՎԻՏ II .- Ամրոցը /մ.թ.ա. II-I հազ./ գյուղից արևելք, Ջովասար տանող ճանապարհի ձախ կողմում է: Բարձր բլրի գագաթային մասը շրջափակված է կիկլոպյան շարվածքի պարիսպներով: Ամրոցի շրջակա տարածքում կան դամբարանաբլուրներ, որոնք վերաբերվում են ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններին:

ԿՈԹՈՂՆԵՐԸ.- Հայաստանի պատմության պետական թանգարանում պահվում է Գառնհովիտից բերված քառակող մի կոթող, որի մակերեսին քանդակված կնոջ պատկերը կապ-

վում է գարնան զարթոնքին նվիրված հեթանոսական պատկերացումներին:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև քաղաքացիական ու պալատական շենքերի, գյուղական տների, ամբարների մնացորդները:

* * *

Համառոտ այս տեղեկանքում անկարելի է ներկայացնել Թալինի շրջանի հնագիտական, ճարտարապետական, արվեստի ինքնատիպ հուշարձանների ողջ համապատկերը՝ դրանց ստեղծման և շարունակական զարգացման ողջ ընթացքով, թեև դրանք ազգային ու համամարդկային պատմության անդաստանում ունեն որոշակի դրական արժեք:

Պետք է նկատել սակայն, որ Թալինի հուշարձանների հաշվառման և ուսումնասիրման արդի վիճակը բնավ էլ գոհացուցիչ չէ, և դրա նկատմամբ նախանձախնդրության հրահրումը մնում է կենսական գործ: Շրջանի հուշարձանների հաշվառման, ուսումնասիրման, պահպանության խնդիրը պետք է, որ մնա ազգաբնակչության, գիտական, հասարակական, պետական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում, մի գործ, որի առաջին քայլը սույն ուղեցույցն է:

Աշխատանքը, անշուշտ, կլրացվի, կշտկվի հետագա նյութերով և կամբողջացնի մեր մշակույթի ստուգապատում հիմնաքարը:

Թալինի շրջանի եկեղեցիների հատակագծերը



Տախտակ 1

Գրքում տեղադրված լուսանկարները

Նկ.1	Թալինի Կաթողիկե եկեղեցին
Նկ.2	Թալինի Ս.Աստվածածին եկեղեցին
Նկ.3	Պարիսպների ավերակները
Նկ.4	Թալինի Ս. Աստվածածին եկեղեցու / XIXդ./ ընդհանուր տեսքը
Նկ.5	Խաչքար Թալինից
Նկ.6	Թալինի քարավանատան ավերակները
Նկ.7	Թալինի ջրամբարի ավերակները
Նկ.8	Թալին. Քառակող կոթողի հատված
Նկ.9	Հեթանոսական ծագումով կոթող
Նկ.10	Կոթողի պանտվանդան
Նկ.11	Հատված Թալինի մեծ դամբարանադաշտի պեղումներից
Նկ.12	Թալինի Աղբյուր-հուշարձանը
Նկ.13	Կոթողի խոյակ Ագարակից
Նկ.14	IX դարի խաչքար
Նկ.15	Բայազի եկեղեցին
Նկ.16	Բնակելի քարայրներ Բայազի կիրճում
Նկ.17	Քանդակապատկերներով կոթող Ն. Սասնաշենից
Նկ.18	Քառակող սյունանման կոթող
Նկ.19	Ձկնակերպ վիշապակոթող
Նկ. 20	Զորավար Անդրանիկի կիսանդրին
Նկ. 21	Իրինդի եկեղեցին

Նկ. 22	Քառակող կոթող
Նկ. 23	Սյունատիպ կոթողի բեկոր
Նկ. 24	Բնակելի համալիրի հատվածը «Զաքարի բերդ» ամրոցի տարածքում
Նկ. 25	Հատված «Աշնակ» ամրոցի պարիսպից
Նկ. 26	Աշնակի դղյակ - եկեղեցու ընդհանուր տեսքը
Նկ. 27	Դաշտադեմի ամրոցը
Նկ. 28	Ակունքի «Թուխ մանուկ» մատուռի ընդհանուր տեսքը
Նկ. 29	Կարմրաշենի «Ճգնավոր» հուշարձանախումբը
Նկ. 30	Զարինջայի ս. Խաչ եկեղեցին
Նկ. 31	Մաստարայի Ս. Հովհաննես եկեղեցին
Նկ. 32	Մաստարայի «Թուխ մանուկ» մատուռի խոյակով կոթողը
Նկ. 33	Մաստարա, խաչքարեր
Նկ. 34	Շենիկի V դ. եկեղեցու ներքին տեսքը
Նկ. 35	Շենիկի Ս. Սարգիս եկեղեցին
Նկ. 36	Գառնհովիտի Ս. Գևորգ եկեղեցին
Նկ. 37	Գառնհովիտ. դեկորատիվ խորշեր, խաչերի պատվանդան սյուներով

ՀԱՄԱՀԱՎԱՔ ՑՈՒՑԱԿ

ԹԱԼԻՆԻ ԵՐՋԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

ԹԱԼԻՆ

1. Մ.թ.ա. III հազարամյակի դամբարան-հարթակը:
2. Թալինի մեծ դամբարանադաշտը:
3. Առանձին կանգնած դամբարանաբլուրները:
4. «Ձուլիակ բլուր» ամրոցը:
5. Անտիկ շրջանի քաղաքատեղին:
6. Անտիկ դամբարանները:
7. IV դարի կոթողը:
8. IV-VII դդ. կոթողի պատվանդանը:
9. IV-VII դդ. կոթողի խոյակը:
10. Քառակող սյունանման կոթողը /IV-VII դդ./:
11. Կոթողների բեկորներ /IV-VII դդ./:
12. Բազիլիկ եկեղեցին /V դ./:
13. Թալինի Կաթողիկեն /VII դ./:
14. Թալինի Փոքր եկեղեցին /VII դ./:
15. Հավասարաթև խաչերի պատկերով քարերը /V-VI դդ./:
16. Արձանագիր տապանաքարերը /V դ./:
17. Վաղ միջնադարյան որմնասյուները:
18. Ջրամբարը:
19. Ջրամատակարարման ցանցը:
20. Խաչքար /XI դ./:
21. Խաչքար Կույս Սանդուխտ հուշարձանում:
22. Կլոր խաչքարը /IX դ./:
23. Արձանագիր խաչքարը /IX դ./:
24. Խաչքար /XI դ./:
25. Խաչքարը /IX-XII դդ./:
26. Խաչքարեր /XII-XIII դդ./:
27. Քաղաքատեղիի պարիսպները:
28. Հանդիսավոր շքամուտքը:
29. Քարավանատունը:
30. Քաղաքացիական շինությունը /XI-XII դդ./:
31. Բնակատեղին Թալինի հյուսիսում:
32. Միջնադարյան բնակատեղին:
33. Ուշ միջնադարյան բնակատեղին:
34. Գերեզմանոցը /V-XVII դդ./:

35. Գերեզմանոցը /XVI-XVII դդ./:
36. Ջրաղացները:
37. Ձիթհանը:
38. Քաղաքային տիպի տները:
39. Ս. Աստվածածին եկեղեցին /XIX դ./:
40. Աղբյուր-հուշարձանը:

ԱԳԱՐԱԿ

1. Դամբարանները:
2. IV-VII դարերի կոթողների պատվանդանը:
3. Քառակող կոթողը /IV-VII դդ./:
4. IV-VII դդ. կոթողների խոյակները:
5. Եկեղեցին:
6. Խաչքար /XI-XII դդ./:
7. Խաչքար /XI-XIII դդ./:
8. Խաչքարերի բեկորները:
9. Պաշտամունքային շինության ավերակները /XV-XVII դդ./:
10. Ժայռափոր ջրաղացը:
11. Ջրավազանը:

ՊԱՐՏԻԶԱԿ

1. Դամբարանադաշտը:
2. Ժայռապատկերը:
3. Բնակելի քարանձավը:

ԴԻԱՆ

1. Կիկլոպյան ամրոցները:
2. IV-VII դդ. կոթողի պատվանդանը:
3. Քառակող սյունանման կոթողը /IV-VII դդ./:
4. Խաչքարերը /XI-XIII դդ./:
5. Միջնադարյան գերեզմանոցը:

ԲԱՅԱԶ

1. Բրոնզեդարյան դամբարանները:
2. Բնակելի քարայրները:
3. Եկեղեցին:
4. Խաչքարերը:

ԿԱԲԱՎԱՉՈՐ

1. Դամբարանները:
2. Մենհիրները:
3. Մ.թ.ա. 1-ին հազարամյակի ամրոցը:
4. Պաշտամունքային կառույցները:
5. Սյունանման քառակող կոթողը /IV-VII դդ./:
6. Կոթողի պատվանդանը /IV-VII դդ./:
7. Բազիլիկ եկեղեցու ավերակները:
8. Խաչքարը:
9. Կենդանակերպ արձաններով գերեզմանոցը:
10. Միջնադարյան գյուղատեղին:

ԱՎԹՈՆԱ

1. Դամբարանաբլուրները:
2. Կիկլոպյան ամրոցի ավերակները:
3. Ժայռի մեջ փորված սարկոֆագները:
4. Կոթողները /IV-VII դդ./:
5. Խաչքարերը:

ՎԵՐԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ

1. Մ.թ.ա. 1-ին հազարամյակի ամրոցը:
2. Դամբարանադաշտ:
3. Եկեղեցու ավերակները:
4. Ստորգետնյա մատուռը:
5. Խաչքարերը:
6. Գյուղատեղին:

ՆԵՐՔԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ

1. Վաղ բրոնզեդարյան բնակատեղին:
2. Մ.թ.ա. 1-ին հազարամյակի բնակատեղին:
3. Մ.թ.ա. 1-ին հազարամյակի ամրոցը:
4. Դամբարանաբլուրները:
5. Պաշտամունքային ժայռանկարները:
6. Բազմաբերդ 1-ին ամրոցը:
7. Բազմաբերդ 2-րդ ամրոցը:
8. Միջնադարյան քարհանքերը:
9. Գյուղատեղին:

ՆԵՐՔԻՆ ՍԱՍՆԱՇԵՆ

1. Բրոնզի և վաղ երկաթեդարյան ժամանակաշրջանի դամբարանները:
2. Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի ամրոցը:
3. Մ.թ.ա. 1-ին հազարամյակի ամրոցը:
4. Վաղ միջնադարյան ամրոցը:
5. Բազիլիկ եկեղեցին /V դ./:
6. IV-VII դդ. կոթողի պատվանդանը:
7. Սյունանման քառակող կոթողը /IV-VII դդ./:
8. VII դ. եկեղեցին:
9. Մատուռը /XI-XII դդ./:
10. Ջրամբարը:
11. Միջնադարյան շինությունը:
12. Խաչքարեր /XI-XII դդ./:
13. Միջնադարյան գյուղատեղին:

ՎԵՐԻՆ ՍԱՍՆԱՇԵՆ

1. Վիշապակոթողը:
2. Դամբարանները:
3. Մ.թ.ա. 1-ին հազարամյակի բնակատեղին:
4. Զորավար Անդրանիկի հուշարձանը:

ԴԱՎԹԱՇԵՆ

1. Դամբարանները:
2. Քարանձավները:
3. Վաղ միջնադարյան ամրոցը:

ԻՐԻՆԴ

1. Մ.թ.ա 3-րդ հազարամյակի ամրոցը:
2. Դամբարանադաշտերը:
3. Քառակող կոթողը /IV-VII դդ./:
4. VII դ. եկեղեցին:
5. Կոթողի հատվածը /IV-VII դդ./:
6. Խաչքար /X-XIդդ./:
7. Խաչքարեր /XI-XIIդդ./:
8. Միջնադարյան գյուղատեղին:
9. Եղեռնի զոհերի և Երկրորդ համաշխարհային պատերազմում զոհված մարտիկների հուշահամալիրը:

ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ

1. Մ.թ.ա. 2-1-ին հազարամյակի ամրոցը:
2. Բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջանի դամբարանադաշտերը:
3. Անտիկ դարաշրջանի ամրոցը:
4. Անտիկ դամբարանադաշտը:
5. Վաղ միջնադարյան «Զաքարի բերդ» ամրոց-բնակավայրը:
6. «Դաստակերտ» ամրոցը:
7. Ժայռափոր տնտեսական համալիրը:
8. Քառակող կոթողը /IV-VII դդ./:
9. Եկեղեցու ավերակները:
10. Կոթողի պատվանդան/IV-VII դդ./:
11. Խաչքար /XI դ./:
12. Խաչքարեր /XI-XII դդ./:
13. Միջնադարյան գյուղատեղին:
14. Միջնադարյան գերեզմանոցը:

ԱՇՆԱԿ

1. Դամբարանաբլուրները:
2. Անտիկ դամբարանները:
3. Աշնակ 1-ին ամրոցը /մ.թ.ա. III-V դդ./:
4. Աշնակ 2-րդ ամրոցը /մ.թ.ա. III-V դդ./:
5. Աշնակ 3-րդ ամրոցը /մ.թ.ա. III-V դդ./:
6. Աշնակ 4-րդ ամրոցը /մ.թ.ա. III-V դդ./:
7. Վաղ միջնադարյան գյուղատեղին:
8. Եկեղեցին:
9. Կոթողների բեկորները /IV-VII դդ./:
10. Դղյակ-եկեղեցին /X-XIV դդ./:
11. Միջնադարյան գյուղատեղին /XI-XIV դդ./:
12. Մեկ բաժանմունքով հնձանային համալիրները /XI-XV դդ./:
13. Երկբաժանմունք հնձանային համալիրները /XI-XV դդ./:
14. Քառաբաժանմունք հնձանային համալիրները /XI-XV դդ./:
15. Բազմաբաժանմունք հնձանային համալիրները /XI-XV դդ./:
16. Վաղ միջնադարյան դամբարանադաշտը:
17. Արծանագիր խաչքարերը /XII-XIV դդ./:
18. Խաչքարերը /XI-XV դդ./:
19. Միջնադարյան ցանկապատերը:
20. Միջնադարյան գերեզմանոցը:

ՇՂԱՐՇԻԿ

1. Դամբարանաբլուրները:
2. Վաղ միջնադարյան ամրոցը:
3. Եղեռնի և երկրորդ աշխարհամարտում զոհվածներին նվիրված հուշահամալիրը:

ԵՂՆԻԿ

1. Ս. Նշան եկեղեցին /XVII դ./:
2. Խաչքարերը /XI-XIV դդ./:
3. Միջնադարյան արծանագիր տապանաքարերը:
4. Միջնադարյան գյուղատեղին:
5. Պորտաքարը:
6. XIX դ. բազիլիկ եկեղեցին:
7. XX դ. սկզբի որմնանկարները:
8. Ձիթհանը:
9. Աղբյուր-հուշարձանը:
10. Պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձանը:

ԴԱՇՏԱԴԵՄ

1. Բրոնզեդարյան դամբարանները:
2. Վիշապակոթողը:
3. Ս. Քրիստափոր եկեղեցին /VII դ./:
4. Աշտարակ-զանգակատուն /X դ./:
5. Միջնադարյան դղյակը:
6. Եկեղեցին /XI դ./:
7. IX դ. արծանագիր խաչքարը:
8. Խաչքարերը /XI-XIV դդ./:
9. Արծանագիր խաչքարերը /XI-XV դդ./:
10. Եկեղեցու տնտեսական համալիրները:
11. Արծանագիր տապանաքարերը:
12. Մեկ բաժանմունքով հնձանները:
13. Երկբաժանմունք հնձանները:
14. Երկհարկանի հնձանները:
15. Բնակելի քարանձավները:
16. Մատուռները:
17. Միջնադարյան գյուղատեղիները:
18. Միջնադարյան գերեզմանոցները:
19. X-XIV դդ. կառուցված ամրոցային համալիրները:
20. Քաղաքային տիպի բնակելի տունը:

ՈՍԿԵՓԱՍ

1. Բրոնզեդարյան դամբարանները:

ՀԱԿԿՈ

1. Ուրարտական դամբարանները:

ԱՐԱԳԱԾ

1. Եկեղեցին /VI դ./:

ԱԿՈՒՆՔ

1. Բրոնզեդարյան դամբարանադաշտը:
2. Մ.թ.ա. 2-1-ին հազարամյակի ամրոցը:
3. Մ.թ.III-V դդ. ամրոցը:
4. Բնակելի քարանձավները:
5. IV-VII դդ. քառակող կոթողները:
6. Մատուռը /XII դ./:
7. Խաչքարերը /XI-XIII դդ./:
8. Միջնադարյան գյուղատեղին:
9. Միջնադարյան գերեզմանոցը:
10. XIX դ. բազիլիկատիպ եկեղեցին:
11. XX դ. քաղաքային տիպի տունը:
12. Երկրորդ համաշխարհային պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձանը:

ԿԱՐՄԻՐԱՇԵՆ

1. Դամբարանաբլուրները:
2. Քառակող կոթողները /IV-VII դդ./:
3. Եկեղեցին:
4. Խաչքարերը /XI-XIV դդ./:
5. Արձանագիր խաչքարերը /XI-XIII դդ./:
6. Ճգնավորների բնակելի խցերը:
7. Ժայռափոր ջրաղացները:
8. Ջրատար թունելը:
9. Միջնադարյան գյուղատեղին:
10. Միջնադարյան գերեզմանոցները:
11. XIX դարի եկեղեցին:

ԲԱՐՈՒ

1. Պալեոլիթյան կայանները:
2. Բրոնզեդարյան դամբարանները:

ՀԱՑԱՇԵՆ

1. Պալեոլիթյան կայանները:
2. Խաչքարերը /XI-XIV դդ./:
3. Գյուղատեղին:
4. Երկրորդ համաշխարհային պատերազմում զոհվածներին նվիրված հուշարձանը:

ԱՐԵԳ

1. Պալեոլիթյան կայանները:
2. Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի ամրոցը:
3. Մ.թ.ա. 1-ին հազարամյակի ամրոցը:
4. Դամբարանները:
5. Անտիկ դարաշրջանի գյուղատեղին:
6. Ուշ միջնադարյան ամրոցը:
7. Ուշ միջնադարյան գյուղատեղին:
8. Երկրորդ համաշխարհային պատերազմում զոհվածներին նվիրված հուշահամալիրը:

ՑԱՄԱԲԱՍԱՐ

1. Վաղ բրոնզեդարյան բնակատեղին:
2. Դամբարանները:
3. Միջնադարյան գյուղատեղին:

ՍՈՒՍԵՐ

1. Դամբարանաբլուրները:
2. Խաչքարերը:
3. «Թուխ Մանուկ» մատուռը:

ՋԱՐԻՆՋԱ

1. Եկեղեցին:
2. Խաչքարերը /XI-XII դդ./:
3. Խաչքարերը /XI-XIII դդ./:
4. Միջնադարյան գերեզմանոցը:
5. Երկրորդ համաշխարհային պատերազմում զոհվածներին նվիրված հուշարձանը:

ՄԱՍՏԱՐԱ

1. Բրոնզեդարյան դամբարանադաշտը:
2. Մ.թ.ա. 1-ին հազարամյակի ամրոցը:
3. Վաղ միջնադարյան ամրոցը:
4. Եկեղեցին /VI դ./:
5. Իմպոստային կոթողները /IV-VII դդ./:
6. Քառակող սյունանման կոթողը /IV-VII դդ./:
7. Եկեղեցու ավերակները /XI-XII դդ./;
8. Մատուռը /XVII դ./:
9. Ս. Նախավկա մատուռը /XVII դ./:
10. Արծանագիր խաչքարեր /XI-XII դդ./:
11. Խաչքարեր /XI-XIII դդ./:
12. Խաչոտ վարդապետի խաչքարը /XIII դ./:
13. Միջնադարյան գյուղատեղին:
14. Միջնադարյան գերեզմանոցները:
15. Բնակելի քարանձավները:
16. Քաղաքային տիպի բնակարանները:
17. Երկրորդ համաշխարհային պատերազմում զոհվածներին նվիրված հուշարձանը:

ՋՈՐԱԳՅՈՒՂ

1. Մ.թ.ա. 2-1-ին հազարամյակի դամբարանադաշտը:
2. 1-ին հազարամյակի ամրոցը:
3. Խաչքարերը /IX-XIII դդ./:
4. Բնակատեղին:

ԾԱՂԿԱՍԱՐ

1. Վաղ բրոնզեդարյան ամրոցը:
2. Դամբարանաբլուրները:
3. Գյուղատեղին:
4. Ջրաղացի ավերակները:

ՇԵՆԻԿ

1. Բազիլիկ եկեղեցին /V դ./:
2. Եկեղեցին /VII դ./:
3. Քառակող կոթողները /IV-VII դդ./:
4. IV-VII դդ. կոթողների պատվանդանները:
5. Խաչքարերը /XI-XIII դդ./:
6. Վաղ շրջանի շինությունների ավերակները:

7. Գյուղատեղին:
8. Միջնադարյան գերեզմանոցը:

ԳԱՌՆԱՀՈՎԻՏ

1. Բրոնզեդարյան դամբարանադաշտը:
2. Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի ամրոցը:
3. Մ.թ.ա. 1-ին հազարամյակի ամրոցը:
4. Եկեղեցին /IV դ./:
5. Քառակող կոթողները /IV-VII դդ./:
6. Մատուռը /XVII դ./:
7. Քարանձավները:
8. Հնագույն քաղաքացիական շինությունները:
9. Ջրաղացները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. **Ագաթանգեղոս**, «Հայոց պատմություն», Երևան, 1988թ. հրատ.:
2. **Ղ. Ալիշան**, «Այրարատ», Վենետիկ, 1890թ.:
3. Անանիա Շիրակացի
4. **Բ. Ն. Առաքելյան**, «Հայկական պատկերաքանդակը IV-VII դդ.», Երևան, 1949թ. հրատ.:
5. Ե. Ա. Ասատրյան, «Թալինի ջրամատակարարմանմիջնադարյան համակարգերը», «Լրաբեր» ամսագիր, 1989թ. թիվ. 4:
6. Գարեգին Հովսեփյան, «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության», Հ. Բ., Երևան, 1887թ.:
7. Եղիշե, «Վարդանանց պատերազմի պատմությունը», Երևան, 1958թ.:
8. Ս. Տ. Երեմյան, «Հայաստանը ըստ Աշխարհացույցի», Երևան, 1963թ.:
9. Թովմա Արծրունի, «Պատմություն Արծրունեաց տան», Երևան, 1985թ.:
10. Թ. Թորամանյան, «Նյութեր հայ ճարտարապետության պատմության», , հ.1, Երևան, 1948թ.:
11. Կ. Կոստանեան, «Վիմական տարեգիր», Ս. Պետերբուրգ, 1912թ.:
12. «Հայ ժողովրդի պատմության քրիստոմատիա», հ.1, Երևան, 1981թ.:
13. Վ. Մ. Հարությունյան, «Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները», Երևան, 1960թ.:
14. Հովհաննես Դրասխտանակերտցի, «Պատմություն հայոց», Տփղիս, 1912թ. :
15. Մ. Վ. Հովհաննեսեան, «Հայաստանի բերդերը», Վենետիկ, 1970թ.:
16. Ղևոնդ, «Պատմություն», Երևան, 1982թ. :
17. Ա. Ա. Մանուչարյան, «Քննություն Հայաստանի շինարարական վկայագրերի», Երևան, 1977թ.:
18. Տ. Հ. Մարության, «Ավանի տաճարը», Երևան, 1976թ.:

19. «Պատմություն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ», Թիֆլիս, 1912թ.:
20. Ա. Շահինյան, «Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները, խաչքարերը»:
21. «Ստորագրություն Կաթողիկե էջմիածնի և հինգ գաւառացն Այրարատայ», աշխատասիրությամբ Յովհանու եպիսկոպոսի Շահխաթունեանցի, հ.2, էջմիածին, 1842թ:
22. **Е. А. Асатрян**, "Раннесредневековые крепости-поселения Армении", Автореферат диссертации. 1989г.
23. **В. М. Арутюнян**, **С. А. Сафарян**, "Памятники армянского зодчества", М-1951г.
24. **К. Е. Думберг**, "Раскопки в селении Эшнак", известия и заметки, М-1894г.
25. **А. Хачатрян**, "Корпус Арабуких надписей Армении VIII-XVI вв.", выпуск-1, Ереван, 1987г.
26. **Х. Ф. Б. Линч**, "Армения", т.1, Тифлис, 1910г.
27. **Н. М. Токарский**, "Архитектура Армении IV-XIV вв", Ереван, 1961 г.

ԵՍԱՅԻ ԱՍԱՏՐՅԱՆ

ԹԱԼԻՆԻ ՇՐՋԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Խմբագիր՝ Կարեն Զորյան
Ձևավորում՝ Է. Խաչատրյան

Есаи Асатрян

Памятники Талинского района

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 5.25 տպ.մ.: Տպաքանակը՝ 500:

«ՀՈՒՇԱՐՁԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Երևան, Փ. Բյուզանդի 1/3

9(47.9)
Հ-32

Եսայի Ասատրյանը ծնվել է 1948 թ. սասունցու ավանդապահ ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի Արագածոտնի Ներքին Բազմաբերդ գյուղում:

1971 թվականին նա ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի հնագիտության բաժինը: Ուսանողական տարիներին մասնակցել է Արմավիրի, Գառնիի, Շիրակավանի, Սյունիքի հնագիտական արշավախմբերի աշխատանքներին, հետագայում՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Երևանի պետական համալսարանի կողմից իրականացվող պեղումներին, ձեռք բերել մասնագիտական խորը գիտելիքներ:

1975 թ. ընդունվել է ՀՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ասպիրանտուրան:

Ե. Ասատրյանը 1983-1991 թվականներին աշխատել է Երևանի պետական համալսարանի հնագիտական հետազոտությունների կենտրոնում:

Ութ տարի շարունակ ղեկավարել է Արագածոտնի տարբեր հնավայրերի գիտական պեղումները: Այդ ուսումնասիրությունների նյութերը հիմք հանդիսացան թեկնածուական ատենախոսության համար, որը պաշտպանեց 1989 թվականին:

Արցախի ազատագրման ակտիվ մասնակիցը 1993 թ. պաշտոնավարել է ՀՀ պաշպանության նախարարությունում, իսկ 1996-1998 թթ եղել է Թալինի զինկոմ:

1998 թ. ընդհատվեց բազմաթիվ ծրագրեր ունեցող հնագետի ու հայրենիքի զինվորի կյանքը:

Այս ուսումնասիրության հրատարակումը գործընկեր հնագետների հարգանքի տուրքն է անխոնջ գիտնականի հիշատակին:

«ՀՈՒՇԱՐՁԱՆ»
ԵՐԵՎԱՆ 2004